

ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԳԻՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ

ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱՆ,

՚Ի ՍՈՓԻԱՅԷ ՄՍԵՐԵԱՆՑ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

„Ա՛ւ է անգան քան ո՛չ երբէք“ (Աստ):

ՏԵՏՐ Ա.—(ՆՈՅՆՄԱՐԵՐ-ԳԵԿՏԵՄԱՐԵՐ)—1881 ԵՄԻ

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

- »ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ“ հանդիսի նիւթն է՝ Պատմական, Բանասիրական, Քաղաքական և Ազգային Գիտելիք:
- »ՓԱՐՈՍ“ լինելով պատկերազարդ հանդէս՝ խնդրում է պատուելի ազգայնոց առաքել նորան, տպագրութեան համար, Ազգային հեղինակաց և երևելի անձանց, Հայաստանի հնութեանց և նշանաւոր տեղեաց պատկերներն, նոցա համառօտ նկարագրութիւններով:
- »ՓԱՐՈՍԻ“ խմբագրութիւնն ուրախութեամբ կընդունէ տպագրութեան համար ազգային մատենագրութեան և ազգային կենաց վերաբերեալ յօդուածներ, ազգային վէպեր, ոտանաւորներ, և այլն:
- »ՓԱՐՈՍ“ հրատարակի ՚ի Մոսկուա վէջ անդամ ՚ի տարին, այն է՝ երկու ամիսն մէկ անգամ:
- »ՓԱՐՈՍԻ“ տարեկան գինն հանդերձ առաքմամբ է 5 ռուբլի:
- »ՓԱՐՈՍԻ“ ներկայ ամի տետրերն առանձին չեն վաճառվում:
- »ՓԱՐՈՍԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ հասցէն այս է. Москва, Меньшикова башня, домъ Милованова. (Մոսկուա. Մէնշկովա բաշնայ, տուն Միլովանովի):

՚Ի ՄՈՍԿՈՒԱ
IMPRIMERIE A. A. GATZOUK.
à Moscou, Boulevard de Nikitsky, maison Gatzouk.
1881.

Այս պետքով հրատարակում է «ՓԱՐՈՍԻ» հրատարակչությունը:

Ա Ջ Դ

ԱՅՍ տեսարժան վերջանում է **ՓԵՐՈՍ ՀԱՅԵՍՏԱՆԻ** պատկերազարդ հանդիսի **ԵՐԵՎԱՆ** տարին:

Յայտնում ենք մեր հրապարակական շնորհակալութիւնը այն ամեն մեր պատուելի ազգայիններին, որք սիրով օգնեցին մեզ մեր հանդիսի հրատարակութեան ժամանակ թէ՛ յօդուածներով և թէ՛ բաժանորդութիւն հաւաքելով: Մանաւանդ յայտնում ենք մեր անկեղծ և լիակատար շնորհակալութիւնը **Մեծապատիւ Տոբթոր Տիգրան Փիշտիմալճեանին** (ի **Ս. Պօլիս**), որ ձրիապէս աշխատեցաւ մեր Հանդիսի համար մէկ ամբողջ տարի՝ զարգարելով նորան իւր գեղեցիկ և օգտակար յօդուածներով:

ՓԵՐՈՍ ՀԱՅԵՍՏԱՆԻ պատկերազարդ հանդիսի հրատարակութիւնը, նորա գլխաւոր աշխատակցի հիւանդութեան պատճառաւ, այս տեսարժան դարձաւ և և աւելի հրապարակուելու չէ:

Հանդիսիս ներկայ տեսարիս մէջ կան քանի մի յօդուածներ, որք դեռ վերջացած չեն և որոց տակում տպուած է թէ պիտի շարունակուին: Այս պատահեցաւ հանդիսիս առաջին երկու թերթերի մէջ, որոց տպագրուելու ժամանակ դեռ յոյս ունէինք շարունակել մեր հանդէսը:

Հաստատ զիտենք, որ շատերը պիտի ցաւին մեր հանդիսի դադարման վերայ, ինչպէս մենք ինքներս ցաւում ենք որ այսպիսի յաջող կերպիւ սկսուած և ամեն դժուարութիւններին յաղթած գործը պարտաւորվում է այժմ վերջացնել իւր օրերը: Մենք սիրով կը շարունակէինք մեր հանդիսի հրատարակութիւնը՝ եթէ քանի մի ցաւով հանգամանքներ չ'արգելէին մեզ: Մեր մէջ լրագրութիւնը ապրոստի միջոց դեռ դարձած չէ և կարող է դրահաբերութեան համարուել հրատարակիչների կողմից: Մեր հասարակութեան հարկաւոր չէ մոռանալ այս...

Ներկայ 1881 թուականիս մէջ **Փարոս Հայաստանի հանդէսն** ունէր (մինչև Հոկտեմբերի 1) 516 բաժանորդ, որք կարգաւորվում են այսպէս.

1. Ս. Պօլիս—107:—2. Աղէքսանդրապօլ—56:—3. Տիֆլիս—38:—4. Երևան—28:—5. Բաղու—26:—6. Երզրում—20:—7. Մոսկուա—16:—8. Պետրբուրգ—16:—9. Սիմֆերապօլ—15:—10. Ախլցիսա—12:—11. Ելեզաւէտպօլ—11:—12. Չմիւռնիս—10:—13. Վաղարշապատ—10:—14. Աստրախան—8:—15. Շուշի—8:—16. Կարս—7:—17. Քութայիս—6:—18. Թաւրիզ—5:—19. Վան—5:—20. Օտէսա—4:—21. Մոզակ—4:—22. Բիշնև—4:—23. Մէլիտոպօլ—4:—24. Ռուստով Գոնգետի վերայ—4:—25. Կարսու-Բաղար—3:—26. Եյսկ—3:—27. Նոր-Նախիջևան—3:—28. Մայիս—3:—29. Ղալար—3:—30. Ախալքալք—3:—31. Հնչեշտ—3:—32. Թաղանթօլ—3:—33. Փօքչան—3:—34. Արմանակ—2:—35. Եւպատորիս—2:—36. Բէլց—2:—37. Սոնախ—2:—38. Շամախի—2:—39. Մեծ Վարաքիլիս—2:—40. Չարաթալ—2:—41. Մէլիտիս—2:—42. Օրհէյ—2:—43. Ռաշդ—2:—44. Փօթի—1:—45. Վերին Ագուլիս—1:—46. Царскія Колодцы—1:—47. Նոր-Բայազետ—1:—48. Գարբանա—1:—49. Սօրօքի—1:—50. Սալեան—1:—51. Օրտուբատ—1:—52. Ստարապօլ—1:—53. Չալալ-Օղլը—1:—54. Котовъ-Ивановскъ—1:—55. Բաթում—1:—56. Սարը-Քամըշ—1:—57. Ղազան—1:—58. Աշուրափէ—1:—59. Божій-Промыселъ—1:—60. Юзовская почтовая станція—1:—61. Գէլեթան—1:—62. Բէրլին—1:—63. Закаспійскій военный отдѣлъ—1:—64. Նիժնի-Նովգորոս—1:—65. Թալաւ—1:—66. Կոն—1:—67. Կիեւ—1:—68. Յարիցին—1:—69. Գորի—1:—70. Սուրաբ—1:—71. Ст. Михайлово—1:—72. Տրապիզօն—1:—73. Սուխում-Քալէ—1:—74. Արդաբէլ—1:—75. Բաշնօրաշէն—1:—76. Գաւառը—1:—77. Աստարաբատ—1:—78. Աղբերման—1:—79. Չամծաւիվար (Transilvania)—1:—80. Պետրովսկ—1:—81. Իզդիլ—1:—82. Թէոդոսիս—1:—83. Արմաւիր—1:—84. Խրամ—1:—85. Ղասալ-Խըթ—1:—86. Մանչեսթեր—1:—87. Փարիզ—1:—88. Նուխի—1:

Բաց ՚ի նշանակուած բաժանորդներից **Փարոսն** ուղարկուեցաւ ներկայ 1881 թուականիս մէջ իբր ընծայ 45 անձանց:

1881 թուականի **Փարոսի** 600 օրինակաց տպագրութեան, թղթի, պատկերաց, կազմի, առաքման, և մի քանի հեղինակաց վարձատրութեան տարեկան ծախքն եղաւ 1.950 ռուբլի:

Բաժանորդներէն ստացուած գումարն է՝ 1.583 ռուբլի:

Չստացուած (մինչև Հոկտեմբերի 1) բաժանորդական գումարն է՝ 997 ռուբլի:

Ուրեմն այժմ մեր առժամանակեայ դրամական վիճանն է միայն 367 ռուբլի:

ՓԵՐՈՍ ՀԱՅԵՍՏԱՆԻ հանդիսի անվաճառ մնացած տետրերը կարելի է ստանալ հետևեալ գներով.

1879—1881 թուականների բոլոր տետրերը ՚ի միասին կազմուած. գինն առաքմամբ 7 ռուբ.

1880—1881 թուականների բոլոր տետրերը ՚ի միասին կազմուած. գինն առաքմամբ 6 ռուբ.

1881 թուականի բոլոր տետրերը ՚ի միասին կազմուած. գինն առաքմամբ 5 ռուբ.

1880 և 1881 թուականների տետրերից (բաց ՚ի 1, 2 առանց Ներսէս Պատրիարքի պատկերի, 3 և 4 տետրերից

1881 թ.) առանձին առանձին գնել ցանկացողներն վճարում են իւրաքանչիւր տետրի համար 50 կոպ. հանդերձ առաքմամբ:



ԵՐՐՈՐԴ

ՏԱՐԻ

ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԿԷՍ ՊԱՏԵՐԱԶԱՐԴ

ՏԵՏԻ Օ:

ՆՈՑԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԵՐ

1881 ՆԱԻ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Կ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

ՔԱՆԻ ՄԻ ԽՕՍԳ ԿՈՐԱ ԿԵՆՍԱԿՐՈՒԹԻՒՆԻՑ

(Հարուստագրիչ):

1833 թուականի Օգոստոսի 23-ին Այվազովսկի մտաւ գեղարուեստական Ակադեմիա (Академія художеств): Ծովային կենդանագրութեան բացառական դասատուութիւնը չկար այն ժամանակ և այս տեսակ պատկերները առհասարակ պէյզաճների կարգին էին վերադասվում, ուստի երիտասարդ նկարիչը աշակերտեցաւ անուանի պէյզաճիստ¹⁾ պրոֆեսոր Մ. Կ. Վ. օրօբեվին: Բայց էական օգուտը բերեցին Այվազովսկուն Աւրոպացուց երևելի նկարիչների արտագրութիւնները, որոնք գեո. յայտնի չէին նորան: Ինչպէս նկարիչը ինքն խոստովանում է, նորա հանձարի զարգացման շատ նպաստել է Վլոդ-Ղ. Օռէնի (1600—1682) պէյզաճների օրինակը:



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ:
ИВАНЪ КОНСТАНТИНОВИЧЪ АЙВАЗОВСКІЙ.
(Պատկերս նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

Հնորհագեղ հարաւեց յետոյ, մեր հիւսիսային աղքատ բնութիւնը, իւր գունատ երկնքով ու մառախլապատ, մութ օրերով չէր կարող բաւարար տպաւորութիւն ունենալ հարաւում ծնած Այվազովսկու վերայ. բայց մեր ամարային լուսափայլ գիշերներն ևս չէին կարող գրաւիչ չըլինել նորա համար:

Յ. Կ. Այվազովսկի իրրե Ակադեմիայի աշակերտ ունէր այնտեղ սենեակ, ստանում էր ճաշ և թագաւորական շորեր. քչով շատանալով նա չգիտէր ի՞նչ ասել է շայլութիւն, որ յատուկ է երիտասարդ հասակին: Այվազովսկի նկարների վաճառումը մատակարարում էր նորան մի չնչին գումար մանր ծախսերի համար: Տօն և հանդիսաւոր օրերին նա յաճատում էր իշխան Սուլթով-Ուրմնիկսկու և Ալէքսէյ Տովիլովի տները: Տովիլովը, որ շատ բարի մարդ էր ու չափազանց սիրում էր

1) Բնութեան տեսարաններ նկարող:

նկարչութիւնը, ունէր հարուստ ժողովածու պատկերների և գրավիւրների, որոնք Ռէմբրանդտի և միւս առաջնակարգ նկարիչների աշխատութեան արգասիք էին: Պ. Տօմիլով ամեն կերպ միջոցներ էր տալիս Այվազովսկուն նորա տաղանդը զարգացնելու և կատարելագործելու համար և Յովհաննէս Արնստանտեանի խօսքերով — «Տօմիլովի համակրութեան նա շատ երախտապարտ է և անշնչ չպահում է նորա յիշատակը»: Ամարնային ամիսները անցուցանելով Ա. Տօմիլովի կալուածներում, Ուսպենսկի գիւղում (Հին Լադօգային կից՝ Վօլխով գետի ափում), Յ. Ա. Այվազովսկի նկարում էր բնութիւնը: Տօմիլովի տանը նա ծանօթացաւ կոմս Ն. Մօրգովինովի և այլ բարձրաստիճան անձանց հետ: Իբրև գեղեցիկ բնաւորութեան տէր մարդ Այվազովսկի սիրելի էր իւր բոլոր ընկերներին:

Այվազովսկու տաղանդը օր աւուր զարգանում էր. նորա յառաջադիմութիւնը շուտով նշմարեց Ալեքսեյ Նիկոլաեւիչ Օլէնինը, որ այն ժամանակ գեղարուեստական Ակադեմիայի նախագահն էր: 1835 թ. Ս. Պետերբուրգ ժամանեց Ֆրանսիացի մարինիստ Փիլիպպոս Տաննէր, ճարտար նկարիչ, բայց խռովայոյզ, ինքնասէր և իւր յատուկ արժանաւորութիւնեց չափազանց կուրացած մի մարդ: Խուսկելով հայրենիքում իւր պաշտօնակից-նկարիչների և խիստ քննադատողների հետ, Տաննէրը եկել էր Ռուսիա բազմ որոնելու: Մայրաքաղաքիս Ֆրանսիացի գաղթականութիւնը ամենայն տեղ տարածելով իւրեանց հայրենակից Տաննէրի համբաւը, հասուցել էր այն մինչև կայսեր Նիկոլայ Պաւլովիչի ականջը: Ողորմածաբար ընդունելով մի անգամ Տաննէրին, կայսրը ապսպարեց նորան մի քանի ծովային տեսարաններ նկարել: Աորա աչք շրջնող պատկերներին շատերը հաւանեցան և դորա սիրողների շրջաններում խօսակցութեան գլխաւոր առարկան էին դառնում, որ մեծ պատիւ է մի օտարական նկարչի համար: Մի օր կայսրը, խօսելով Տաննէրի պատկերների մասին Ա. Օլէնինի հետ, հարցրեց սորանից՝ կոյ արդեօք Ակադեմիայի ուսանողների մէջ մի տաղանդաւոր երիտասարդ պէյպաժիստ Տաննէրին աշակերտելու համար: Ա. Օլէնինը ուղղակի ականարկեց Այվազովսկու վերայ, որին ներկայացրին Ֆրանսիացի մարինիստին նոր տեսակ կենդանագրութեան մէջ կատարելագործվելու համար: Այվազովսկին ըմբռնեց Տաննէրի գրելու եղանակը առանց իւր նոր վարժապետի մասնակցութեան: Գոռողութեամբ վարվելով իւր աշակերտի հետ և զիտաւորութիւն չունենալով բնաւ հաղորդել նորան իւր գիտութիւնը, ապսպարված պատկերներով զբաղված Տաննէրը յանձնում էր Այվազովսկուն ներկեր պատրաստել և կամ Ս. Պետերբուրգի տեսարաններ օրինակել, որպէս զև ապագայում օգուտ քաղէ դոցանից իւր յատուկ պատկերների համար: Օտարականի այսօրինակ վարմունքը մատաղ տաղանդի վերաբերութեամբ, յայտնի բան է, ամենևին չնպաստեց նորա ինքնուրոյն զարգացման: Ամառը, 1835 թուին, Արօնշտադտ գնալու միջոցին, այնտեղի նաւամատոյցը բնութիւնից նկարելու համար Տաննէրը պատուիրեց Այվազովսկուն Տրոյիցկի կամրջի վրայից արտագրել Պօղոս—Պետրոսեան բերդի արտաքին տեսքը և Յովհաննէս Արնստանտեանը հարկադրված էր պարապիլ գորանով:

Մինչ այս մինչ այն, Ա. Օլէնինը կամենալով ձեռնտու լինել Այվազովսկու յառաջադիմութեան, առաջարկեց նորան նկարել ծովային տեսարան— «օդի էտիւզը ծովի վերայ» առաջիկայ աշխարհահանգիսի համար, որ լինելու էր աշնան

ժամանակ: Ուրախութեամբ հնազանդվելով իւր բարի խնամատարին, Այվազովսկին հիւանդ ձևացաւ Տաննէրի վերադառնալուց յետոյ և հեռանալով Ակադեմիա մեծ լըջմտութեամբ ձեռնամուխ եղաւ գործին: Պատկերը աշխարհահանգիսի ժամանակին պատրաստ էր: Խորհրդի դատավճռին համաձայն Այվազովսկին ստացաւ առաջին արժամէ մեդալը և նորա առաջին աշխատութիւնը գետեղվեցաւ Ակադեմիայի դահլիճների մինի մէջ: Հանդիսականաց խուսն բազմութիւնը չէր հեռանում այս պատկերից. այնքան գեղեցիկ էր դա: Ռուսաց հասարակութիւնը ջերմ համակրութեամբ վերաբերվեցաւ դէպ ՚ի իւր երիտասարդ նկարչի գործը, որի մէջ ակներև նշմարվում էին անուրանալի հանձարի նշանները:

Այվազովսկու յաջողութեան համբաւը շուտով հասաւ Տաննէրի ականջին. յերևան եկան իսկոյն Ֆրանսիացի նկարչի մտերիմ բարեկամները և այս դէպքում սկսան քսութեամբ պնդել իբր թէ Այվազովսկու վարմունքը, իւր վարժապետի վերաբերութեամբ, պետական յանցանք է, մասնութիւն ու դաւաճանութիւն է, և այլն: Օպրացած Տաննէրը, Ֆրանսիայի որդուն միայն յատուկ յանդգնութեամբ, երես առ քառ Ռուսաց հիւրասիրութիւնից, շտապեց դէպ ՚ի Имперское Целю քաղաքի ապարանքը և գանգատեց կայսեր Նիկոլայ Պաւլովիչին իւր աշակերտի վերայ, թէ դա համարձակվել է առանց նորա, այսինքն վարժապետի թոյլտուութեան՝ արտադնել իւր պատկերը աշխարհահանգիսի մէջ: Հանգուցեալ կայսրը թէպէտ և շատ պաշտող էր գեղարուեստների և հսկում էր նոր տաղանդների վերայ, սակայն իբրև խիստ կարգապահ ու խրատիչ ստորադրեալներից պահանջում էր միշտ հնազանդութիւն դէպ ՚ի նոցա մեծաւորները. ամենաշնչին յանցանքը գրգռում էր նորա բարկութիւնը ու տհաճութիւնը: Յիշեալ դէպքում Այվազովսկու միակ մեղքը այն էր, որ նա հնազանդվել էր Ակադեմիայի նախագահ Պ. Ա. Օլէնինի հրամանին. այս բանը յայտնի չէր կայսեր: Տաննէրի ինքնասիրութիւնը սաստիկ վերաւորված էր ո՛չ թէ Այվազովսկու կեղծ յանդգնութեամբ, այլ ներքին համոզմունքով, թէ նորա պատանի-աշակերտի մէջ, արդարև, ճշմարիտ հանձար կայ... Ինչ և իցէ կայսրը հրամայեց իշխան Վօլկոնսկուն «քնալ Ակադեմիա և դուրս հանել տալ աշխարհահանգիսից Այվազովսկու պատկերը»: Հրամանը կատարվեցաւ: Այվազովսկու պատկերը, որ գրաւում էր բազմաթիւ հանդիսականաց ուշադրութիւնը, անսլապաղ դուրս տարեցին հանդէսը յաճախողների ահագին բազմութեան ներկայութեամբ:

Այս տխուր իրողութիւնը նիւթ դարձաւ չարախօս բանասարկուների համար. իսկ Այվազովսկուն հասած վիշտը հարկադրեց լեզուազարել նորա մասին նաև այն մարդոց շատերին, որոնք մի օր առաջ հիանում էին նորա պատկերով: Գտնվեցան այնպիսի փոքրոգի անձինք ևս, որոնք երդում էին թէ բնաւ չեն տեսել յիշեալ չարաբաստ պատկերը: Բայց այստեղ ուրախալի երևոյթ ևս տեղի ունեցաւ: Այվազովսկու ընկերակիցները, որոնք անշափ զգուած ու կատաղած էին Տաննէրի քսութեամբ և նորա անկերև նախանձով դէպ ՚ի ուսս տաղանդը, երկու շաբաթ անցած պատկերի դուրս հանելուց յետոյ, ըստ արժանւոյն վճարեցին այս իրողութեան առիթ տուողին: Երբ Տաննէրը եկաւ հանդէսը այցելելու, Ակադեմիայի ուսանողները շփոթ ու աղմուկ յարուցանելով այնպիսի թշնամական ցոյցեր արեցին, որ նա իսկոյն հարկադրվե-

ցաւ փախչել և այս անգամ գանգատել արդէն չհամարձակվեցաւ :

Վժուար է նկարագրել Այվազովսկու սրտի կսկիծը ու տաղտկութիւնը Տաննէրի աններելի վարմունքից յետոյ : Խեղճը փախաւ և առանձնացաւ Ահադեմիայում ունեցած իւր փոքրիկ սենեկում ահուգողով սպասելով նոր ձախորդութիւններին, որոնք, գուցէ, խանգարեն բոլոր նորա ապագան : Ընկերակիցները իւրեանց կարողութեան չափ մխիթարում էին նորան, համակրում էին նորա վշտերին : Բայց առաջին մխիթարական խօսքը ու խրատոյսը Այվազովսկուն վիճակվեցաւ լսել Վասիլի Անդրէեվիչ Ժուկովսկուց 1), որ անձամբ ճանաչում էր Այվազովսկուն, տեսնելով նորա հետ Ա. Օլէնինի տանը. համեստ և զթառատ Ժուկովսկին համոզում էր Այվազովսկուն չորտմիլ և տեղի չտալ յուսահատութեան, այլ առաջուայ նման պարապիլ կենդանագրութեամբ : Իսկան Անդրէեվիչ Պոլիով — ուսաց անմոռանալի առակագիրը, գալով Ահադեմիա կամեցաւ տեսնել Այվազովսկուն : Յովհաննէս Աոնտանտեանի ընկերները ուրախ աղաղակներով ներս թափվեցան նորա սենեակը և յայտնեցին Պոլիովի ցանկութիւնը : Այվազովսկին դուրս եկաւ և հռչակված «դէրդշկան» 2) փաշարչութեամբ մօտ կանչեց անձարացած նկարչին :

«Ե՛կ, եկ ինձ մօտ սիրելիս», ասաց նա բարեգութ ձայնով, և համբուրելով երիտասարդի ձակատը՝ շարունակեց. «Ի՛նչ է, եղբայր, Պրանսիացին քեզ վշտացնում է : Է՛, է՛, ի՛նչ մարդ է եղել նա... դէ՛հ, Աստուած նորա հետ. դարդ մի՛ քաշիր...» : Ժուկովսկու և Պոլիովի ցաւակցութիւնը փոքր ինչ թեթեւացրեց Այվազովսկու բարոյական բեռը, բայց Թագաւորի բարկութիւնը տակաւին ծանրացած էր նորա վերայ և բարեխօս լինել նորա համար կայսեր առաջ ինքն Ա. Օլէնինն ևս չէր վտահանում, երկիւղ կրելով առաւել մեծ ձախորդութիւններից : Այս տխուր նախագուշակութիւնների միջոցին վրայ հասաւ նոր, 1836 տարին, որոյ սկզբում ձակատագիրը ուղարկեց նորան մի ազնիւ ջատագով Ահադեմիայի պրոֆեսոր Ա. Ի. Չաուերվէյդին :

Վերջինս, իբրև պատերազմական տեսարանների նկարիչ, վայելում էր կայսեր Նիկոլայ Պաւլովիչի առանձին յարգանքը. կայսրը, ինչպէս արդէն յայտնի է, ինքն ևս երբեմն պարապում էր կենդանագրութեամբ, սիրում էր պատկերներ զինուորական կենքից առած բովանդակութեամբ, և զանազան տեսարաններ նկարելիս օգուտ էր քաղում միշտ Չաուերվէյդի խորհուրդներից : Նոյն Չաուերվէյդը նկարչութեան ուսուցիչ էր մեծ իշխանների և մեծ իշխանուհեաց : Յաճախելով Նոյնի Այսերական Բարձրութիւնքը, Չաուերվէյդը հաղորդում էր նոցա Այվազովսկու պատկերին պատահած թշուառ դէպքի մասին և աշխատում էր շահել նոցա բարձր համակրութիւնը դէպ ՚ի երիտասարդ նկարիչը : Նոյնի բարձրութիւնքը մեծ ցաւակցութիւն էին յայտնում, բայց չէին համարձակվում խոստանալ Չաուերվէյդին բարեխօս լինել կայսեր առաջ յիշեալ պատկերի առթիւ :

Այն ինչ հանգամանքները փոխվեցան Այվազովսկու օգտին : Տաննէրը անախառութիւնից դրդված՝ չեմանալով

1) Հանգուցեալ կայսեր Ալէքսանդր Նիկոլաւիչի և ուս գրականութեան վարժապետն էր բանաստեղծ Ժուկովսկին :

2) Մեծ հայր, պապ. այսպէս կոչում են Վոլիովին Ռուսեր : Ծան. Թարգմանչի :

շահվել կայսեր ուշադրութիւնից և ոչ ևս համեստութեամբ գնահատել նորանից տեսած երախտիքը, իւր յանդգնութիւնը այն տեղն էր հասուցանում, որ մոռանում էր մինչև անգամ քաղաքավարութեան տարրական օրէնքները : Պրանսիացի նկարչի անսովոր վարմունքը, անհեթեթութիւնները, յաճախակի վէճերը պալատական-նշանաւոր անձանց հետ, վերջապէս, զրգոնեցին կայսեր տհաճութիւնը : Տաննէրին հրամայեցին դուրս գնալ Ռուսաց տէրութեան սահմաններից :

Մի օր 1836 թուականի Մարտ ամսին, մեծ իշխանուհեաց տուած նկարչութեան դասերից յետոյ, Չաուերվէյդը պալատի դահլիճների մինի մէջ պատահեցաւ Նիկոլայ Պաւլովիչ կայսեր, որ արքունեաց նախարարի հետ էր : Սոյն դահլիճի պատերը զարդարված էր Տաննէրի պատկերներով : Ողջունելով Չաուերվէյդին, կայսրը կանգնեցաւ այս պատկերների մինի առաջ և պախարակեց նորա վրայ նկարած կերպարանքները, բայց զովեց նոյն նկարչի մի ուրիշ պատկերը : Համաձայնելով նորին Մեծութեան կարծեաց հետ, պրոֆեսոր Չաուերվէյդ նկատեց՝ թէ Տաննէրից ոչ պակաս վարպետութեամբ նոյնը կարող է գրել «մեր ուս նկարիչ Այվազովսկին» :

Հազիւ նշմարելի անպ ստուերացաւ Թագաւորի երեսին, նորա կապոյտ աչքերում ցոլացաւ յանկարծ զայրոյթ, բայց աներկիւղ, ազնիւ Չաուերվէյդը շարունակեց.

— Թէպէտե Տաննէր վատաբանեց Այվազովսկուն, իբրև անշնորհակալ մարդուն և առհասարակ նկարագրեց նորան բաւականին մութ գոյներով, սակայն մենք, Ահադեմիայի պրոֆեսորներս, անաչառութեամբ ենք վերաբերվում դէպ ՚ի նորա աշակերտները : Այստեղ գոհացուցիչ ժպտը քաջալերեց Չաուերվէյդին և նա կնքեց իւր խօսքերը Այվազովսկու մասին գեղեցիկ գովասանութեամբ :

«Ինչո՞ւ դու այդ բանը առաջուց ինձ չասացիր», նկատեց կայսրը :

«Չերդ Մեծութիւն, խոհեմութեամբ պատասխանեց Չաուերվէյդը, այլեկոծութեան ժամանակ, փոքր մակոյկներին վտանգաւոր է մօտենալ մեծ նաւերին, որոնք դեռ զինուած են հարիւրաւոր թնդանթներով... խաղաղ եղանակին կարելի է...» :

«Դու միշտ պուխ ես տանում քո առակներով» — նկատեց կայսրը ծիծաղելով. — «Ո՞ւր է Այվազովսկին» :

Ահադեմիայում է Չերդ Մեծութիւն :

— Վաղը անմիջապէս կրննրկայացնես ինձ նորա պատկերը, որ դուրս հանված էր պատկերահանութից, վերջացրեց իւր խօսքը Նիկոլայ Պաւլովիչը, արձակելով Չաուերվէյդին :

Անչափ ուրախացած իւր արած բարեխօսութեան բախաղաւոր հետևանքից, Չաուերվէյդը վերադառնալով մեծ իշխանուհեաց սենեակները, պատմեց հանգուցեալ մեծ իշխանուհի Մարիա Նիկոլաւիչային կայսեր ողորմածութեան մասին դէպ ՚ի Այվազովսկին : Իւր բարի և փափուկ սրտի զգացմունքից դրդուած, մեծ իշխանուհին համբուրեց իւր պատուական ուսուցչի ձակատը :

Միւս օրը Այվազովսկու պատկերը ուղարկեցին ձմերնային պալատ :

Թագաւորը շատ գոհ մնաց դորանից, հրամայեց տալ նկարչին 1000 ռ. թղթագրամ (ասիգնացիով), և պատուիրեց Այվազովսկուն ուղեկից լինել նորին կայսերական բարձրութեան Մեծ իշխան Աոնտանտին Նիկոլաւիչին,

որ 1836 թուականի ամսարան առաջին գործնական նաւա-
զնացութիւն պիտի կատարէր Պինսկի ծովածոցում:

Այն ընդհանր սկսեալ, մի քանի ամիս կրած զանն վիշտ

ու փորձութիւններից յետոյ, Այվազովսկին անհռով՝ չենք
ասի՝ գնաց, այլ նաեց իւր փառահեղ ինչպէս ծով և
նոյնգունակ լայնատարած գեղարուեստական ասպարիզում:

(Մնացորդն յաջորդ տերթում):

Խ, Յ.

ԹԻՐԱԿԻ ՄԻ ՔԱՆԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Հարուստիւն-իւն):

ԱՆԵՍՈՒ ՎԱՆԲԸ:

Տեկուից 1½ ժամու ճանապարհ հեռաւորու-
թիւնով նորա արեւելեան-հիւսիսային կողմում, կա-
նաչախիտ զառիվերի կուրծքին դրուած է 10 տա-
նից բաղկացած Ալէմ կամ Ալաման անունով
պարսկաբնակ զիւղը, որի կենդրոնում գտանվում
է մի հնաչէն վանք, որ ըստ ասութեան շ. Ալե-
շանեանի հիմնարկուած է 637 թուականին:

Սա իւր 20 մասերով կամ հարթ անկիւններովը,
քանդակներով ու փորուածքներով զրեթէ ճիշդ
Ագարակու Ս. Ստեփաննոս եկեղեցին կ'պատկե-
րացնէ *):

Ունի երկու դռներ, արեւմտեան և հարաւային
կողմերից:

Հարաւային որմը բարձրանում է երեք կարգ
աստիճանների վերայով, որի կենդրոնում կայ կի-
սաւեր քառակուսի դուռը իւր անպաճոյճ և հա-
սարակ շրջանակով:

Ունի նաև 8 հատ նեղ և երկար պատուհաններ,
որոց 4ը կաթողիկէի և մնացեալ 4ը ևս ներքին
պատերի միջեց են:

Այս եկեղեցին՝ որ հաստատուած է զօրշ և
թուխ քարերով Ս. Անանիայի անունով, բնութեան
ու սրբապիղծ ձեռքերի հարուածներին երկար ժա-
մանակ չկարողանալով դիմանալ, ներկայումս մի
աղէտալի դիրք ստացել է... տեղ-տեղ քանդուած
է, տեղ-տեղ կործանուած և համարեա եկեղեցու
նմանութիւնը անգամ կորցրած է...

Յարտաքուստ զմբէթը կոփածոյ քարերից բոլո-
րովին մերկացած է և միայն ներքին կողմի մի շարք
աղեղնաձև կերպով շարուած քարերն են մնում:

Վաթողիկէի ութը հարթ և հաւասար մասերը
դրուած են քառակուսի դիրքով 4 հատ առանձին
ցածր և խախտուած որմերի վերայ, որոնք հաստա-
տուած են մամուսպատ, կանաչալից և տեղ-տեղ
բացված ձեղունի կենդրոնում: Վաթողիկէի պա-
տուհանների բարձրում փորուած կան երեքական
հաւ մեծ-մեծ միմեանց կից տերեւներ:

Հարաւային որմի պատուհանները, որոնք դրուած

*) Այս պատճառու մենք աւելորդ համարեցինք դնել այս
տեղ սորա պատկերը. Հրատար.

են դռան երկու կողմերում, ունին քանդակագործ
շրջանակներ: այս պատի վերայ գտանվում է նաև
հայկական տառերով մի կիսաբոլոր արեւանիշ ժա-
մացոյց, որի բարձրում և զրոշմուած է մի շարք,
եկեղեցու կէս մասը շրջապատող, դօտիաձև արձա-
նագրութիւնը:

Ս. Անանիայի բոլոր մասերի զարդարուն գա-
նիդները ըստ մեծի մասին թափուած են և կոր-
ծանուած:

Ինչպէս ասացինք, միւս մուտքը արեւմտեան
կողմից է, որի վերայ գտանվում է կիսաբոլոր
շրջանակով մի փոքրիկ պատուհան:

Ի ներքուստ ձեղունը ամբարձած է 4 որմնա-
սեանց կամ լայն ու բազմաձալ խարխիսների վե-
րայ: Դիրքը խաչաձև է, 4 կիսաբոլոր մասերի
բաժանուած. ունի բազմախորշ սեղան, որի աջ և
ձախ կողմերում կառուցուած են մանր խորանները:
Այս կողմի պատերը ըստ մեծի մասին հաստա-
տուած են թուխ և սև քարերով:

Այս սրբութեան Տաճարը ներկայումս ծառա-
յում է պարսիկներին խոտանոցի, յարդանոցի և,
կրքին, աղբանոցի տեղ...

Հարաւային որմի վերայ, արեւանիշ ժամացոյցի
բարձրում մակագրուած է հետեւեալը՝

«Քան և ութ եմոյ շերակի բարեպաշտ թագաւորի
Ներսէսի Շիրակայ և Արշարունեաց Տեառն և թւոփիդոսի...
ունեաց Եպիսկոպոս Գրեգոր եղուստը և Մարիամ իմ կին
չենեցաք զսուրբ եկեղեցիս վասն մեր հոգւոյ...»

Դռան կամարի ներքեւ՝
* «Յանուն Աստուծոյ այս իմ դիր է Սոփէ Հայոց և
Արաց թագուհի թողեալ եմ զԱլամանս շարխաթս վասն իմ
արեւատութեան:»

Արեւանիշ ժամացոյցի ներքեւ՝
* «Յանուն Աստուծոյ ՚ի ՆԱԵ թուականութեանս Հայոց
և ՚ի թագաւորութեան Գագկայ ես Խոսրովանուշ... զԱլա-
մանս հարի սև թառ մակս վասն գագկայ արեւատութեան...
արդ... որ հակառակ կայ և ԾԸ... Բունի հովուեսցի եղեցի
մասն ողորմութեան...»

Հարաւային դռան բարձրը՝
«Յանուն Աստուծոյ այս իմ դիր է Սոփէ... Հահանշահի
հայոց և վրաց թագուհի թողել եմ զԱլամանս շարխաթս
վասն իմ հոգւոյ և արեւատութեան և Հահանշահի հոգւոյն
և Գագկայ և իւր որդեացն արեւուն եթէ որ յեա մեր յան-
դգնի և առնու ՅԹԸ իցն նղովեալ եղեցի և բաժին ընդ
յուզայի մասնչի և ընդ Սիմնի կախարդի և ընդ Գեհեղե
բորոտի և սուրբ Անանէ նմա ոտխ:»

ԲԱԳՆԱՅՐԻ ՈՒՒՅՏԸ:

Այժմ կամ Ալաման գիւղից դէպ 'ի արեւմտեան-հիւսիս, գրեթէ երեք ժամու ճանապարհ հեռաւորութեամբ, Ալաճայ լեռան կուրծքին զրուած են Ղոզլիճայի, հնումն՝ Բագնայր աւանի հռչակաւոր մենաստանները:

Այդ այն պատմական Ալաճայ լեռան է, որի վերայ դեռ մեր Արշակունեաց թագաւորութեան ժամանակից մինչև այսօր շարունակ թափուել են ճակատամարտից արիւնները, — մշանջենաւոր պատերազմների ասպարէզ դարձած...

Արկու միմեանց կից բարձրաւանդակների զանիվայրները անցնելով, այցելուի աչքերի առջև

ժուած պիտի փափագես մի վայրկեան առաջ տեսնել... (նւմ) Աշոտին ու Տիեզերակալ Սմբատի՞ն, կամ թերևս հանդիսատես լինել մի գեղեցիկ տեսարանի...

Ալաճան կանաչախիտ, խոտուէտ և ծաղկալից է. իսկ կլիման, առ հասարակ այս կողմերում, բարեխառն է, ջուրը սառը, մաքուր, հեռապէս և առողջարար:

Ղոզլիճան՝ որ յայտնի է իւր մի ժամանակուայ հայաբնակ Բագնայր անունովը և բազմաթիւ ազգաբնակութիւնով, այժմ Տաճկաց սեպհականութիւն է, 5 տուն Տաճիկ բնակիչներ ունի. զոքա կիսակործան մենաստանների արթուն պահապաններն են (?..), զոքա ձեռքում մեր սրբութեան Տաճար-



ԲԱԳՆԱՅՐԻ ՈՒՒՅՏԸ: || БАГНАЙРСКАЯ ОБИТЕЛЬ.
(Պատկերս նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

պատկերանում է մի տիուր և սրտաշարժ տեսարան. Հայի սիրտը կ'իթնայ իւր նախնեաց փառաւոր անցեալի հուժկու արձագանքով... Արա երևակայութիւնը գրաւում են մի կողմից՝ Բագնայրի բազմազմբէթ մենաստանները, միւսից՝ Բագրատունեաց վերջին Պահի-Մնի մայրաքաղաքի բարձրաբերձ պարիսպները, հսկայակերպ մեծ-մեծ բուրգերը, որոնք մի ժամանակ առանձին-առանձին մայրտիոցներ են եղել, բարձրագագաթ աշտարակները ու բազմաթիւ սրբավայրերի կիսակործան զմբէթները, սոքա բոլորը սկամայից յիշեցնել են տալիս մեր փառաւոր անցեալի ամենաթշուառ և աղէտալի շարունակութիւնը... բնազգամբ արտասուքի կաթիլները կ'զլորուեն քո աչքից, և հեռաբրբրութիւնից շար-

ների պաշտելի բեկորները անասունների դոմ և աղբանոց դարձել են... փոխանակ պատարագի՝ այսօր լսվում են անասնոց բառանչելը, խնկի անուշահոտութեան տեղ՝ բիւրում է աղբի և անմաքրութեան գարշահոտութիւնը... անուշ մեղեդիի և Աստուածպաշտութեան ձայնի տեղ՝ քուրդ հովուի կոպիտ «լօ-լօն»...

Տեղական բնակչոց-սրբապիղծ իսլամների բնակարանները կազմուած են եկեղեցիների քարերից. նրանց «հարամ-օտաների» (կանանոց) և անգամ սրահների յատակները հարթուած են Վրիստոնէական տաճարների սրբազան խորհրդով և միւռօծով օծուած քանդակագործ խաչերովը, առաքելոց և սրբերի ուռուցիկ արձաններովը... իսկ մենք տա-

կաւին յանդգնում ենք պարծենալու մեր գործու- նեայ և արթուն հոգևորականութիւնով...

(Նագնայրի ուխտը 1) բաղկանում է հինգ մի- մեանց կից մենաստաններից: Մանկը՛լ արեւմտեան կիսաւեր պատից ներս, ձեզ հանդիպում է մի քա- ուակուսի շինութիւն, որին զանկակատուն կամ նշխարատուն կարելի է անուանել: Այդ շինու- թիւնը, որ ճիշդ Հռոմոսի նշխարատունը կ'պատ- կերացնէ, 'ի ներքուստ իւր գեղեցիկ փորուածքնե- րով ու կիսաբաց առաստաղի տեղ-տեղ մնացած միւսիւնով մնացեալ բոլոր տաճարների քանդակա- գործութիւնքը կ'զերազանցէ:

Ինչպէս յիշեցինք, այս նշխարատունը քառա- կուսի զիրք ունի, լայնութիւնը ու երկարութիւնը միմեանց համաչափ, եօթական սաժին են. կիսաւեր ձեղունը ամբարձած է 12 որմնասեանց և 4 կլորակ սեանց վերայ: Արտաբոլոր խորշերով որմնասիւները, ներքեից և բարձրից՝ հաստատուած են խոյակներով կամ ներքնա և վերնա-խարխսներով. վերի խոյակ- ներին յենած են երեք կամարների ծայրերը, որոնց մէկի միւս ծայրը դրուած է կենդրոնական սեան վերայ, իսկ միւս երկուսը անցնում են պատի վե- րայով դէպի աջ և ձախ որմնասիւնները և այդ- պիսով ձեղունը բաժանվում է 9 առանձին գրե- թէ տափարակ մասերի, որոնց մէջտեղի 3 մասերը գեղեցիկ միւսիւնով զարդարուած են. դոցա եզեր- քով անցնում է բազմախորշ զառնիզը իւր գա- ւազանաձև շերտերով և գալարուն զօտիներով: Չորս մասերը գրեթէ իսպառ կործանուած են, որ ոչ թէ ժամանակի՝ այլ մեր հոգևոր իշխանութեան թուլութեան և անհոգութեան արդիւնքն կարելի է համարել:

Անդրոնի 4 բոլորչի սիւների գագաթներին նոյն- պէս դրուած են բազմաձաղ և զարդարուն խոյակ- ներ, որոնցից ամեն մինի վերայ յենած են չորս աղեղնաձև կամարների զլուխները: Առ հասարակ որմերի և սիւների բոլոր ներքին մասերը ծածկուած են տեղական տաճիկ բնակչաց անմաքրութիւնով և անասնոց աղբերով, այնպէս որ մօտ կէս սաժին բարձրութեամբ կիկղեցիքը խրուած են այդպիսի կեղտոտութեանց մէջ...

Արեւելեան որմի մէջ կայ մի դուռ, որ Ս. Աստու- ածածին անուանուած կիկղեցու մուտքն է. այս դուռը քառակուսի է, երկու կողմերում զաւազա- նաձև սիւնակներ կամ խարխսներ ունի, որոց վե- րայ դրուած է կամարը իւր քանդակագործ և բազմախորշ շերտերով:

1) Ըստ ասութեան Հ. Ալիշանեանի այս մենաստանները կառուցուած են 1010 թուականին Աբաս Մազխարոսից:

Ղուան բարձրում գտանվում է մի անպաճոյճ և հասարակ փոքրիկ պատուհան:

Նշխարատան երեք պատերն ևս, որոնք հաստա- տուած են սև և թուխ քարերով, ունին հարթ և նուրբ տեղք, գրեթէ ծածկուած են անթիւ արձա- նագրութեամբ, որոնցից մեծ մասը պատկանում է 500 թուականներին և որոնք մնում են, աննշան բացառութեամբ, բոլորովին նոր և անեղծ գրու- թիւնով:

Իսկ չորրորդ, արեւմտեան որմը, որի կէս մասը իսպառ կործանուած և մնացեալ մասերն ևս սրբա- տաշ քարերից և խարխսներից մերկացած լինե- րով՝ արձանագրութիւն ունենալու մասին ես հաս- տատապէս և ոչ ինչ չէի կարող գիտնալ, թէ և գետնի վերայ թափուած շեղջ-շեղջ քարերի մէջ նկատելի են խաչարձանների փշրանքների հետ նաև հայկական տառերով զարդարուած քարերի կտոր- ները:

Ղուան առջև գտանվում են մի զոյգ մեծ և տա- փարակ տապանաքարեր, որ արեան և չափազանց կեղտոտութեանց մէջ թաղուած էին, իմ հարցմանը, թէ ինչո՞ւ այդպիսի տմարդութեամբ և միանգամայն հակառակ իսլամական և Աստուածային օրինաց են վերաբերվում նոքա դէպի Վրիստոնէական կիկղեցին և սրբութիւնքը, տեղական տաճիկ տանուտէրը պա- տասխանեց, որ մասամբ իմ նկատողութիւնը իրա- ւացի էր. «Աստուծոյ հաճելի և սիրելի մարդը, թո՛ղ թէ նա Վրիստոնէայ կամ իսլամ լինի, հա- ւասար է մեզ համար, նա պաշտելի է մեզ, ասաց նա այս երկու շերիմները պատկանում են սրբե- րին. մենք ականատես լինելով դոցա հրաշագործու- թեանցը ընդունում ենք իբրև մերը, և այդ կեղ- տոտութիւնը, որի մէջ խրուած են նոքա, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեծ բազմութեամբ այստեղ յաճա- խող տաճիկ, եզրտի և ուրիշ ազանդաւոր քիւրդ ուխտաւորաց զոհերի (մատաղ) արիւնները. նոքա սովորութիւն ունին, նոյն իսկ ուխտի տեղում կարելու իւրեանց զոհը...» Բայց յետոյ ես տեղե- կացայ, որ տաճիկ տանուտիրոջ պատմութիւնը վերաբերվում էր մի այլ գերեզմանի, որի մասին պիտի խօսեմ իւր տեղում:

Արեւելեան զոնից ներս մտնելով՝ ձեզ հանդի- պում է մի այլ կիկղեցի, որի յատակը ծածկուած է քարի և հողի կոյտերով. որմերը ճեղքաւած են և կաթողիկէն ու ձեղունը կիսով չափ աւերուած: Այս կիկղեցին՝ ինչպէս որ ցոյց կուտայ արձանա- գիրը՝ հիմնարկուած է Ս. Աստուածածնի անունով: Նշխարատանից աւելի փոքր է, նոյնպէս քառակուսի զիրքով. ունի երկու զոներ հարաւային և արև- մական կողմերից:

Արևմտեան մուտքի հանգէս գտանվում է բուրձի և տասնախորշ պատարագի սեղանը:

Ինչպէս կ'երևի, կոնաձև գմբէթը, որ 4 նեղ և երկար պատուհաններ ունի, բարձրացած է եղել առանց սեան, չորս մանեկաձև շրջապատների վերայ ձգուող գառնիզի կամ դօսիի վերայով:

Հարաւային դռնից դուրս գալով՝ ձեզ հանդիպում է 3 հաս բոլորակ, բայց զանկահատան կամ նշխարատան սիւներից աւելի մանր բոլորշի սիւնակներ, իւրեանց կլորակ և քառակուսի վերնախարիստներով, որոց վերայ զրուած են կամարների ծայրերը, իսկ սոցա վերայով, նկատելի է, որ մի ժամանակ բարձրանալիս է եղել մի ուրիշ շինութիւն, գաւթի թէ զանկահատուն կամ մի այլ եկեղեցի... յայտնի է: Ղուար քառակուսի է և բոլորովին անպաճոյճ դիրք ունի, դորա վերայ ձգուած է բազմաձայլ կամարը առանց քանդակագործութեան և ստորին խարիսիների:

Հարաւային պատին կից են 4 հաս որմնասիւններ, որոնք առանձին կամարով միաւորվում են հանդիպակաց սիւների հետ, սոցա վերայով մի ժամանակ ամբառնալիս է եղել զեղեցիկ գմբէթը կամ տափարակ ձեղքների խճազարդ առաստաղը, բայց այժմ այն տեղից նկատելի է կապուտ երկինքը, թափանցում են արեգակի կիզել ճառագայթները և անձրևի մաշող կաթիլները... այս շինութիւնը հաստատուած է նոյնպէս սև և թուխ քարերով, որի հարաւային և արևմտեան որմերի հետքն անգամ աներևոյթացել են ժամանակի ազդեցութեան ներքև...

Արևելեան կողմում զրուած է մատուռի արևմտեան պատը, իւր հասարակ քառակուսի դռնով, որի վերայ ձգուած է մի բազմաձայլ գառնիզ, իսկ նորա բարձրում երեք քանդակագործ խաչեր, որոնցից մէջտեղինը աւելի մեծ է, իսկ աջ և ձախ կողմերինը աւելի փոքր, որ մօտաւորապէս 10—12 վերջք բարձրութեամբ 6 վերջք լայնութիւն ունին: Սոցա բարձրում ուղիղ միջին խաչարձանի վերայ զրուած է նեղ և բաւականի երկար պատուհանը իւր աղեղնաձև քանդակագործ շրջանակով: Պատի կատարներում տեղ-տեղ նկատելի են հասարակ գառնիզները բայց տեղ-տեղ ևս պատը իսպառ մերկացած է իւր կոփածոյ քարիւղից հտեւապէս և գառնիզից:

Հարաւային որմի գրեթէ կէս մասը անկանոն կերպով շարուած է, այդ բանը թերևս տաճիկ բնակիչք արած լինեն. այս որմի վերին մասի վերայ նկատելի են երկու հռանկունի խորշերի հետ նաև փոքրիկ պատուհանը:

Արևելեան որմը նման է հարաւային կամ արևմտեան պատերին, այլ սա բաժանվում է երեք առանձին մասերի, մէջտեղում մի լայն որմ կայ զրուած, որ փոքրիկ շրջանակով մի նեղ պատուհան և մի քառակուսի մուտք ունի:

Սորա զագաթը նոյնպէս կոնաձև է. այս որմից մի քայլափոխ ներսով երկու կողմերում ևս կան մի-մի հաս նեղ պատեր, որոնք զուրկ են ինչպէս պատուհաններից, նոյնպէս և ուրիշ յիշատակութեան արժանի առանձին շէնքերից, մանուածքներից և քանդակներից: Գմբէթը կիսով չափ աւերուած է և միայն 2 պատուհանները կ'տեսնուեն իւրեանց կամարաձև շրջանակներով:

Այս կողմում, գետնի մակերևոյթից մի արշինաչափ ցածրը, կայ մի անգիր գերեզման գրեթէ 1 սաժեն երկարութեամբ, որի չորս կողմը շրջապատուած է մանր քարերով շարուած ցածրիկ պարբսպով: Արևելքից, մանկու համար, մի փոքրիկ մուտք թողնուած է. տապանաքարի արևմտեան կողմում պարսպի մէջ մի քառակուսի խորշ կայ փորուած, ուր ես տեսայ գիշերներում ձիթի ճրագը, տաճիկ բնակիչներից, վառուելիս. այս տեղ Ղուղիճիցիք չափազանց մաքուր են պահում և բացի այն, ինչպէս ասում են, որ այդ «սուբբ» բժշկում է մարդիկներին զանազան ախտերից, տեղացիք մեծ օգուտ ունին շրջակայ գիւղերի և մինչև անգամ շատ հեռաւոր տեղերից այցելող իսլամ և եղիզի ուխտաւորներից. նօքա «Ղուրպան» են մօրթում. փող, ձի, եղ, ոչխար և ուրիշ շատ զոհաբերութիւններ են անում դորան, իսկ այդ ուխտաւորների բոլոր նուիրատուութիւնքը վայելում էին մի ժամանակ Խաթուն-օղուի ընտանիքը, իսկ այժմ տեղացի տաճիկները:

Այս գերեզմանի մասին տաճիկներից մինը հետեւալը պատմեց, որը հաստատեցին նաև Մափրակի գիւղի հայ բնակիչները:

Սորանից 30—35 տարի առաջ, ասաց զուռանի որդին, Ղուղիճայում բնակվում էր յայտնի «Խաթուն-օղու» գերդաստանը: «Խաթունի» աւագ որդին Խամայիլ կամ Ղուրթ փաշան, Արզրումի այժմեան կուսակալը, որքան որ յարգ և պատիւ էր վայելում իւր ընտանիքից, նոյնքան ևս նորան մեծարում էր Շիրակի թէ իսլամ և թէ Քրիստոնեայ ժողովուրդը, մի խօսքով նա խօսքի, սրի հետեւապէս և ընդհանրութեան վերայ ազդեցութիւն ունեցող մի Բէգ էր: Ունենալով իւր յատուկ խումբը, նա անընդհատ արշաւում էր այս և այն գիւղը, անց էր կենում օտար գաւառներ և նահանգներ, աւերում էր, կոտորում էր, թալանում էր և այդ իւր աշխատութեան արդիւնքը պահվում

էր Մախազ-Բերդումը 1), որը իւր անառիկ զիր-
քով այս կողմերի բոլոր ամրութիւնները կ'զերա-
զանցէ: Կա ժողովում էր Շիրակից Աբբունական
հարկը և երբեմն տէրութեան հաշիւ անգամ չէր
կամենում տալ. ամրանում էր այդ բերդումը,
Ալաճայի գագաթներում և կամ այս մենաստան-
ների մէջ...

Այս վանքերը ծառայում էին նորան անասնոց
գոմի և աղբանոցի տեղ, բայց մի անգամ երազի
մէջ երևում է նորան մի ծերունի ասելով՝ որ
»հերիք է մնան իմ ոսկորները կեղտոտութեան և
անարգանաց մէջ...« Իսմայիլ-փաշան ուշադրու-
թիւն չի դարձնում ծերունու խօսքերին, որի առ-
թիւ և հետեւալ զիշերը երևում է նա աւելի ահիլ
և սոսկալի կերպով և չմաքրելու համար սպառնում
է մահով և թշուառութեամբ, վերջապէս ծերունու
երրորդ անգամուայ երևալը ստիպեց Բէզին, բոլոր
վանքերի մինչև յաասկները մաքրել տալու. որով
և երեք գերեզմաններ բացուեցան, զոցանից երկուսը
նշխարատան մէջ գտանուողներն են, իսկ երրորդը
սա է. այս գերեզմանը նոյն իսկ իմ ներկայութեամբ
բաց անել տուեց փաշան, բայց նախ քան մարմնի
երևալը, մենք գտանք մի ուրիշ տապանաքար, որի
վերայ դրոշմուած էին մի քանի շարք հայկական
տառերի, փաշան մօտակայ հայաբնակ »Ճալայ«
գիւղից օրացու կանչեց, բայց մինչև նորա ներ-
կայանալը մենք բաց արեցինք բոլորը և գտանք մի
կմախք, որի գլխին դրուած տակաւին մնում էր
արախճինի փթած կտորները: Տիրացուն կարդալով
մակագիրը, հաղորդեց, որ այդ ննջեցեալը մի բարձ-
րաստիճան հայ-հոգևորական է (եպիսկոպոս կամ
թերևս կաթողիկոս) Գրիգոր Ա.ուսաւորչի ցեղից:
Գորանից յետոյ Իսմայիլ-Փաշան ծածկել տուեց
այդ սրբի գերեզմանը և մենք սակաւ ժամանակից
յետոյ յաճախ շաբաթ և կիրակէ գիշերներում
տեսնում էինք, որ լոյսը կապուա և կանաչ գոյներով
իջնում է այդ նշխարների վերայ, և բացի այդ,
մեծ հրաշքներ է գործում: բժշկում է ցաւագարնե-
րին, կոյրերին, անդամալոյճներին, և, միանգամայն
հասնում է նրանց՝ որոնք ուղիղ սրտով նորանից
օգնութիւն են աղերսում:

1) Մախազ-Բերդը Անի քաղաքի մօտն է գտնուում, նո-
րան ժամանակակից շինութեամբ դրուած է երկու ծիւղաու-
րուած ձորերի կենդրոնում, մի կղզիացեալ ժայռախա բլուրի
վերայ գորա երկու կողմերով հասում է փրփրաղէց Ախու-
րեանը: Խուռն շինութիւնների բեկորները և իսպառ կործա-
նուած պարսպների հետքերը նկատելի են տակաւին. սա եղել
է մեղաւորների բանտ, որ հին ժամանակում յայտնի էր իւր
»Մահապարտից-Բերդ« անունովը:—

»Նշխարատան մէջ սիւներից մէկի վերայով տա-
րին մի քանի անգամ ջուր և երբեմն ևս արիւն
(^o) է բղխում...«

Սրբապիղծ համարուած Խաթուն-օղու ընտա-
նիքը Խալամ սոփաաների խորհրդով, թողեց Շի-
րակը և հպատակելով Տէրութեանը, Աարս և ուրիշ
տեղերում բնակութիւն հաստատեց:

»Օջարմանալի է,— յաճախ կրկնում էր զուռանի
որդին — ձեր հոգևորականութեան անտարբերու-
թիւնը. անցնում են շատ տարիներ և մենք,
Ղոզլիճեցիքս, այս հաճարներին գէթ մի այցելող
հոգևորականի չենք հանդիպում...«

Ամօթիցս կարմրած ես թոյլ չ'տուի Ֆանատի-
կոս Թուրքին մեր հոգևորականութեան վերայ իւր
»զարմանքները« արտայայտելու, բայց ինչ արած,
իրբ այդ բանը լեռներն ու քարերն են աղաղակում...

Հիւսիսային կողմի բոլոր վանքերի որմերն ևս,
որոնք կից են միմեանց, աւելի աւերուած են և,
զրեթէ, սրբատաշ քարերից բոլորովին մերկացած.
զոքա տեղ-տեղ կիսով չափ ծածկուած են հողի և
քարի շեղջերով և տեղ-տեղ ևս անասնոց աղբի
զէզերով...

Արսաւեր միմեանց կից ձեղունների վերայով
ամբարձած են 3 գմբէթները, որոնցից երկուսը
զոյգ մատուռներին են պատկանում, իսկ մէջտե-
ղինը արդէն յիշածս Ս. Աստուածածին եկեղեցուն.
սա միւսներից աւելի փոքրաւեր է, 4 կամարակապ
պատուհաններով, որոնց վերայով անցնում է մի
բազմաձալ գօտի, իսկ այս վերջինի վերայ ամրացած
է կոնաձև գմբէթը իւր կիսակործան գագաթով և
փշրուած նեղ շերփերովը:

Մատուռներից մէկի կաթողիկէն կիսով չափ
բնաջինջ եղած է, որ 2 պատուհաններով, բոլորչի
զիրք ունի, իսկ երկրորդ մատուռինը ութանկիւնա-
նի է 4 լուսամուտաներով, որոնց վերայից անցնումէ
նեղ գօտին, սորա վերայ դրուած է կոնաձև գմբէ-
թը իւր կիսակործան գագաթով և նեղ ու երկար
շերտերով:

Առաջին մատուռի հետ մենք արդէն ծանօթա-
ցրինք ընթերցողին, իսկ երկրորդի մասին այսքանը
կասենք, որ մի անպաճոյճ և հասարակ շինութիւն
է քառակուսի զիրքով ու ծոցաւոր պատարագի
սեղանով: Արծանուած ձեղունի քարերն ու հողը
թափառել են մատուռի կենդրոնում և մի ահագին
բլուր կազմել...

Սոքա շինուած են եղել Ս. Երրորդութեան և
Գրիգոր Ա.ուսաւորչի անունով:

Կարապետ Յովնանյանից:

(Հարո՞ւսակէսցի):

Տ Ա Ն Կ Ր Է Դ

ԼՈՐԴ ԲԻԿՕՆՍՖԻԼԻԻ ՎԵՊԸ:

(Հարանուհի-ին):

Պ. Բ.

Պարզամիտ հայրը պատրաստ էր համաձայնել իւր որդու հետ բոլոր այն կէտերում, որոնք վերաբերվում էին քաղաքականութեան, միայն թէ հանկրէզը չ'բաժանուէր իւր ծնողներից և չ'գնար անյայտ և վտանգաւոր երկիրներ: Պուքսը ամենամեծ զգուշութեամբ յայտնեց իւր ամուսնուն հանկրէզի մտադրութեան մասին. բայց ի՞նչ կարող էր անել խեղճ մայրը, որ միանգամայն զարհուրել էր, լսելով դուքսի խօսքերը, Պարզ բան էր, որ հանկրէզը անկատար

րականներ, խոհարարներ և այլն: Այդպիսի մի նաւ ձեռք բերելը, ճանապարհի յարմարութիւնները հոգալը, յարմար ուղեկիցներ ընտրելը—այդ բոլորը կարօտ էր ժամանակի, իսկ ժամանակը կարող էր փոխել հանկրէզի մտադրութիւնները: Այդպիսի խորհուրդը վատ չէր, թէև նա միայն ժամանակաւորապէս թեթևացրեց անմխիթար ծնողների վիշտը. ինքը հանկրէզը ո՛չ նաւի և ո՛չ ուղեկիցների կարօտութիւն էր զգում, բայց այդ կողմից զիջողութիւն արաւ իւր սիրելի ծնողներին, չ'կամենալով նորանց յուսահատութեան մեջ ձգել: Պուքսը և դքսուհին, կարծելով որ նորա Վրիստոսի



ՄԱՐԻՆՍԿՈՅԵ-ԱՆԱՆՈՎՍԿՈՅԵ ՕՐԻՈՐԴԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ Ի ՏՓԼԻՍՍ

Հիմնաւ ՚ի 1877 թի:

МАРИНСКОЕ-АНАНОВСКОЕ ЖЕНСКОЕ УЧИЛИЩЕ ВЪ ТИФЛИСѢ.

(Պատկերանկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

չի թողնի իւր մտադրութիւնը, չ'նայելով որ ջերմ սիրով սիրում էր իւր ծնողները: Եւ ահա դուքսը և դքսուհին վճռեցին խորհրդակցել իւրեանց ազգականի՝ Լորդ Լսկըդէլի հետ, որը, իբրև փորձուած մարդ, գուցէ աւելի լաւ հասկանար հանկրէզի մտադրութեան սկզբնապատճառը: Բայց և այնպէս լորդ Լսկըդէլի տուած խորհուրդը չ'հանգստացրեց նորանց. համաձայն այդ խորհուրդին նորա պէտք է յայտնէին հանկրէզին իւրեանց յօժարութիւնը, որովհետև, լորդի կարծիքով, առանց պատճառի նորա կամքին հակառակելը կարող էր առաւել ևս բորբոքել նորա ցանկութիւնը. ուստի նորա պիտի համաձայնէին, բայց միևնոյն ժամանակ և պիտի համոզէին նորան, որ դուքս Քելլամմտի միակ որդին ու ժառանգը չէ՛ կարող ճանապարհորդել հասարակ մահկանացուի պէս, նա պէտք է ունենայ մի անանձին փոքրիկ նաւ և մի քանի հաւատարիմ ու անձնանուէր ուղեկիցներ. մի բժիշկ, մի քանի հմուտ և փորձուած զինուո-

գերեզմանին երկրպագութեան գնալու ցանկութիւնը յառաջանում է կրօնական յախշտակութենից՝ մանաւանդ որ նա ծանօթ չէ անպղիական եկեղեցու վարդապետութեան հետ, բարեւոք համարեցին խնդրել Անգղիայի նշանաւոր ուսումնական եպիսկոպոսներից մէկին, որ խրատի հանկրէզին: Այս վերջինս չ'հրաժարուեց գիտնական հովուապետի քարոզը լսելուց, բայց քարոզը դարձաւ վէճ և հանկրէզը յաղթող հանդիսացաւ, որովհետև եպիսկոպոսը չ'կարողացաւ խախտել ո՛չ նորա համոզմունքները և ո՛չ նորա նպատակները: Պքսուհին բոլորովին յուսահատուել էր և դարձեալ դիմեց Լսկըդէլին խորհուրդ հարցանելու: —Այժմ ի՞նչ խորհուրդ կ'տաք մեզ, հարցանում էր նա. —Թող հանկրէզը աշխարհ մտնի, ասաց Լսկըդէլը խմելով մի փոքր բաժակ մաղէրաւ: Աշխատեցէք, որ նա սիրով վերաբերվի դէպի Լճնդօնը,—այդ ամենալաւ միջոցն է, որ նա մոռացման տայ Արուսաղէսը:

—Բայց ինչպէս անեմ ես այդ, հարցանում էր դքսուհին: Այս ինքս ո՛չ մի տեղ չեմ լինում, նորան ո՛չ որ չէ՛ ճանաչում և նա ինքն էլ ո՛չ որի հետ չէ՛ կամենում ծանօթանալ:

—Այդ բանը ես գլուխ կ'ըրերեմ, եթէ կամենում էք, այդ դժուար չէ: Հարկաւոր է միայն, որ երիտասարդ մարկիզը յայտնի իւր ցանկութիւնը, և ահա մի շաբաթուայ միջոցում բոլորի դռները պատրաստ կ'լինեն նորան ընդունելու: Աս կ'ինդրեմ լէդի Ս. Ջուլիանսին և այլ ևս մի քանի մեծանուն տիկիներին, որ հրաւիրեն նորան և այդ հրաւերները ձեռնի նման կ'թափուեն նորա գլխին: Չեզ կ'մնայ միայն համոզել նորան, որ չ'հրաժարուի այդ հրաւերներէ:

—Բայց ինչպէս համոզեմ ես նորան:

—Պուք ասացէք որ նորան ճանապարհորդութիւն անելու համաձայնութիւն տալիս էք միայն այն պայմանաւ, որ նա իւր կողմից չ'մերժի այդ հրաւերները: Սա մայ ահամայ նա ստիպուած կ'լինի համաձայնել ձեզ հետ և ահա այդ կ'լինի մեր գործի յաջողութեան առաջին քայլը: Աս, շատ կարելի է, ահամայ կ'սկսի իւր այցելութիւնները, բայց յետոյ կ'սովորի, իսկ վերին աշխարհը, իմ կարծիքով, կ'ըրացնի մնացեալը:

Ծերունի դուքսը ասաց որ երկիւղ է կրում՝ մի դուցէ Տանկրէզը այդ այցելութիւնների միջոցին չ'տիրապետէր յայտնի դէպի թղթախաղը, բայց ամուսինը ընդհատեց նորա խօսքերը ասելով՝ թէ թղթախաղը այնու ամենայնիւ առաւել լաւ է քան թէ Պարլետինը:

Այսպէս ահա՛ Տանկրէզը յայտնուեց Լ. Օնդոնի մեծ աշխարհում: Դ հարկէ, նա այնպիսի ընդունելութիւն գտաւ, ինչպէս գուշակում էր Ասկըդէլը, և ինչպէս նախատեսել էր լորդը (թէև չէր գուշակել), Տանկրէզը որ մինչև այն ժամանակ չէր ճանաչում կանանց, սիրահարուեց, գոնէ այդպէս էր երևում: Աս յաճախում էր միշտ այն տները, որտեղ լինում էր լէդի Աննատանսը՝ մի գեղեցիկ, խելօք և կրթուած օրիորդ: Արձ միջոցում երիտասարդ մարկիզի և օրիորդի յարաբերութիւնները ամենապարզ և բարեկամական ձև ստացան. մի օր մինչև անգամ Տանկրէզը փոխանակ իւր ճանապարհորդութեան համար վարձած նաւը տեսնել գնալու, բարձր համարեց գնալ ճաշի այնտեղ, որտեղ նա յոյս ուներ տեսնուել լէդի Աննատանսի հետ: Գքսուհին ափսոսում էր, որ լէդի Աննատանսի դերը չէր վիճակուել լէդի Վատարինին՝ իւր եղբոր դստեր, որին դքսուհին պատրաստում էր հարս իւր որդուն:

—Պորա մասին էլ հոգ մի քաշէք, հանգստացնում էր Ասկըդէլը: Պետ այդ տեսակ Աննատանսեր և Վատարիններ շատ կ'լինին, յառաջ քան թէ նա իւր համար հարսնացու ընտրի: Պորա այժմեան սիրոյ զգացմունքը ինքն ըստ ինքեան մի աննշան բան է: Պա միայն սպացոյց է, որ նա, ինչպէս ես ձեզ գուշակում էի, կրմնոանայ իւր ճանապարհորդութեան և նաւերի մասին, երբ որ առաւել լաւ զուարճութիւն գտնի իւր համար:

Գքսուհին բոլորովին համաձայնվում էր լորդի ասածների հետ. իսկ Տանկրէզը այն աստիճան մտերմացել էր Աննատանսի հետ, որ մտածում էր նորա հետ միասին Քրիստոսի գերեզմանին երկրպագութեան գնալ:

Գլ. Գ.

Լէդի Աննատանս շատ խելօք և շատ զուարդ օրիորդ էր: Մշակելով իւր խելքը Փրանսիական բոմանների ընթերցա-

նութեամբ, նա միանգամայն հանրագէտ էր դարձել. իւրաքանչիւր հասարակական հարցի վերաբերմամբ նա իւր գեղեցիկ գլխում պատրաստած ունէր մի ամբողջ պաշար ամենատեսակ պատասխանների: Աս զարմանալի արագութեամբ պատասխանում էր հարց առաջարկողին, ասես թէ այդ պատասխանները յանկարծակի էին ծագում նորա սրանչելի գլխում. այդ բոլորը Տանկրէզի համար նոր բան էր, այդ բոլորը հիացնում էր նորան: Պորա գեղեցիկ կողմը գրաւում էր Տանկրէզի սիրտը. թէև երբեմնակի նա ահաճութեամբ էր լսում օրիորդի խօսակցութիւնը, սակայն այդ դէպքում վատը վերագրում էր նա անբարոյականացնող շրջանի ազդեցութեան, որից նա ինքը աշխատում էր ազատ պահել իւր անձը, և սկսել էր արգէն խորհել, որ մի կերպով Աննատանսին էլ փրկէ:

Մի առաւօտ լորդ Մ'Օնտէկիտը այցելեց լէդի Չարմուտին՝ Աննատանսի մօրը: Աս տանն էր և սիրով ընդունեց նորան: Տանկրէզը նստաւ մօր կողքին և սկսեց նորա հետ խօսել. յանկարծ լէդի Աննատանսը, մի գիրք առնելով սեղանի վերայից, դարձաւ Տանկրէզին և հարցրեց.

—Ձեզ ծանօթ է այս գիրքը:

Տանկրէզը բացեց գիրքը, որ առաջին անգամն էր տեսնում, շրջեց մի քանի թերթ և կարդաց մակագիրը Պ'Քասոս: Պ'իրքը նոր էր լոյս տեսել և մեծ ներգործութիւն էր արել ընթերցող հասարակութեան վերայ, Տանկրէզը լսել էր այդ մասին:

—Ո՛չ, դեռ չեմ տեսել, պատասխանեց նա:

—Եթէ կամենում էք, ես կարող եմ տալ Ձեզ կարդալու: Սա այնպիսի գրուած է, որ արժանի է ուշադրութեան. սորա մէջ ամենայն բան բացատրուած է և ոճը շատ ախորժելի է:

—Ամենայն ինչ բացատրուած է, բացառանչեց Տանկրէզը: Ինչպէս երևում է շատ երևելի գիրք պէտք է լինի:

—Ինձ թուում է, որ դուք շատ կ'հաւանէք: Պ'իտէք, կարդալով այդ գիրքը ես քանիցս անգամ յիշել եմ Ձեզ:

—Ա կրնազրին նայելով, բովանդակութիւնը պէտք է մթին լինի:

—Ո՛չ, գրքի ամբողջ բովանդակութիւնը հիմնած է գիտութեան վերայ: Ամեն բան բացատրվում է գեօլոգիական, աստեղաբաշխական կանոններով՝ զօրօրինակ, դուք կարդում էք և երևակայացնում էք, ինչպէս է ձևակերպվում աստղը—դորանից հետաքրքիր Բ'նչ կարող է լինել: Ղշմարիտ, ես Ձեր վերայ հարկ եմ դնում կարդալ այդ գիրքը, հիանալի գիրք է:

—Բայց այնու ամենայնիւ ոչ որ, կարծեմ, չէր կարող տեսնել աստղի ձևակերպութիւնը:

—Հա՛, 'ի հարկէ: Բայց և այնպէս, դուք անպատճառ պիտի կարդաք Քասոսը: Պ'քրի ամենահետաքրքիր մասը է մարդու զարգացման նկարագրութիւնը: Պուք, յայտնի բան է, գիտէք, որ իւրաքանչիւր անհատի զարգացումը կատարվում է յայտնի կանոնների հիման վերայ. այդ սկզբունքը (պրինցիպը) անուրանալի է: Վզբում ոչինչ չի եղել, յետոյ ծագել է մի բան, նորանից յետոյ... Հա՛, մոռացայ, Հա՛, կարծեմ խեցիներ են երևել, յետոյ յայտնուել են ձկները, սոցանից յետոյ մենք ենք լոյս աշխարհ եկել—բայց, կարծեմ, մեզանից առաջ մի ուրիշ բան էլ է եղել, միայն չեմ յիշում: Մի խօսքով, վերջապէս մենք ենք ստեղծուել: Իսկ նորա, որոնք պիտի փոխանակեն մեզ, մեզանից էլ կատարելագոյն արարածներ պիտի լինեն, նորա,

եթէ չեմ սխալվում, փետրաւոր պիտի լինեն: Այո՛, այո՛, ճիշդ այդպէս է. մենք յառաջագոյն ձկներ ենք եղել և ապագայում ազուաւներ պիտի դառնանք: Բայց լաւ կ'անէք, եթէ ինքներդ կարդաք:

—Այս չեմ հաւատում, որ մի ժամանակ ձուկն եմ եղել:

—Հա՛, սակայն այդ բոլորը այնտեղ ապացուցած է:

Ի հարկէ, ձեզ դիւրին է իմ խօսքերս հերքելը, որովհետեւ ես միայն մօտաւորապէս հաղորդեցի ձեզ ամենագլխաւորը:

Պարբ կարդացէք ամբողջ գիրքը և այն ժամանակ կ'համոզուէք, որ անկարելի է չ'համաձայնուել հեղինակի հետ:

Հասկանում էք, բոլոր եզրակացութիւնները հիմնուած են գիտութեան վերայ և բացի գիտութիւնից ուրիշ ոչինչ չ'կայ:

Պարբ պարզապէս տեսնում էք, ինչպէս է յառաջացել այս կամ այն արարածը: Որքան աշխարհներ գոյութիւն են ունեցել մեզանից առաջ, որքան ժամանակ է շարունակվել դոցա գոյութիւնը, ինչ է եղել առաջ և ինչ յետոյ:

Մենք ունեցել ենք մեր մատերի մէջ տեղում թաղանթ, և շատ կարելի է ժամանակով մեր մէջքերի վերայ թևեր կ'ընեն:

Տանկրէզը բոլորովին զարմացել էր, նա չէր սպասում այդպիսի խօսքեր լսել օրիորդից. նա վեր կացաւ իւր տեղից և, հրաժարական ողջոյն տալով մօրը և դստերը, պատրաստվում էր հեռանալ:

—Մենք այսօր երեկոյեան կըտեսնուենք պարահանդէսում, յիշեցրեց օրիորդը:

«Աս ձուկն եմ եղել և ազուա պիտի դառնամ, խորհում էր ինքն իրան Տանկրէզը, երբ նորա յետեից փակուեց տան արտաքին դուռը: Ինչ գարմանալի՜ էակ է. տակաւին երէկ մտածում էի, որ պիտի կարողանամ նորա հետ միասին գնալ Վրիստոսի գերեզմանին երկրպագութեան: Ինձ հարկաւոր է փախչել այս քաղաքից շուտով, ինչպէս կարելի է շուտով: Բայց օրիորդի հետ ունեցած ծանօթութիւնս 'ի զուր չ'անցաւ. նորա շնորհիւ ես նաև գտայ: Գնամ տուն և գրեմ Պոցհերոնին, որ առնում եմ նորա նաւը:

Այսպիսի մտածմունքների մէջ խորասուզուած գնում էր Տանկրէզը, երբ պատահեց իւր ազգական Լսկըդէլին, որը հեռուից նշմարելով նորան, ընդ առաջ էր գալիս:

—Աս էլ հէնց Ձեզ էի ուզում, բացառանչեց Տանկրէզը: Պարբ խօստացել էիք ինձ համար մի հաւատարիմ ծառայ գտնել, որ լաւ ճանաչէր արևելքը:

Լսկըդէլը չ'էր սպասում, որ Տանկրէզը այդպիսի հարց առաջարկի իրան: Բայց դու ինչո՞ւ ես այդքան շտապում, հարցրեց նա հանդարտութեամբ:

—Աս կ'ցանկայի որչափ կարելի է շուտով ճանապարհ ընկնել:

—Տե՛ր, հը՛մ, ուրեմն նաւը արդէն վարձած է:

—Այո՛:

—Լաւ, եւ այժմ քեզ պահասում է մի հաւատարիմ պաշտօնեայ, ասաց Լսկըդէլը ընդհանրապէս լռութեանից յետոյ:

—Այո՛, ես յիշեցրի Ձեզ դորա մասին, որովհետեւ դուք ձեր սովորական բարեսրտութեամբ խօստացել էիք օգնել ինձ այդ կողմից:

—Այո՛, այո՛, խօստացել էի, հաստատեց Լսկըդէլը մտածելով:

—Բացի դորանից դեռ շատ ուրիշ պէտքեր ունիմ:

—Հարկաւորէ հոգալ փոխանակութի մասին: Չըզիտեմ,

արդեօք բանկի մուրհակներով փոխանակեմ փողերս, թէ այլապէս: Մի խօսքով, խնդրեմ ինձ խորհուրդ տաք, ինչ անեմ և ինչպէս անեմ:

—Իսկ զնդապետի և բոլոր մնացեալ ուղեկիցներից մասին, որոնց հայրդ պատրաստել է քո համար, արդեօք մտածել ես:

—Աս խօստացել եմ հօրս նորանց իմ հետ առնել և կ'կատարեմ խօսքս, թէև նոքա ինձ համար միայն արգելք են: Այսօր իսկ կ'գրեմ նոցա, որ մի շաբաթից յետոյ պատրաստ լինեն, իսկ եթէ ժամանակին պատրաստ չ'լինեն, գոնէ իմ խիղճս մաքուր է, ես առանց նոցա էլ կարող եմ ճանապարհորդել:

—Ուրեմն դու արդէն նաև գտել ես. կարծեմ «Բագիլիսկ» է անունը:

—Այո՛:

—Չ'մոռանաս, որ նաւը հարկաւոր է մի փոքր կարգի բերել. մի քանի բան պէտք է ուղղել:

—Այո, շատ սակաւ: Գեղեցկութեան վերայ ես չեմ հոգում. ինչ որ հարկաւոր է, Գիրբալտարում ուղղել և նորոգել կ'տամ, միայն թէ այստեղից շուտով դուրս գայի, աղատուէի:

—Հա՛, 'ի հարկէ, եթէ դու արդէն վճռել ես և այդպէս շտապում ես... կ'աց. քեզ հարկաւոր է մի հմուտ, փորձառու և արևելքի հետ ծանօթ մարդ, քեզ հարկաւոր է փող, խորհուրդ և նամակներ այնտեղի նշանաւոր անձանց, որ քեզ պարտուպատշաճ կերպով ընդունեն: Հը՛մ, դու ճանաչում ես Սիդոնիային:

—Հասկացողութիւն անգամ չ'ունիմ:

—Աս իսկ և իսկ այն մարդն է, որին դու պէտք ունիս, միայն նորա հետ ծանօթանալը շատ դժուար է: Սպասիր այսօր երկուշաբթի է, վաղը փոստի օր է և ես նորա հետ պիտի ձաշեմ Սիտիում: Ուրեմն, ես քեզ ամենայն ինչ մանրամասնօրէն կ'հաղորդեմ չորեքշաբթի առաւօտեան. միայն ես քեզ խորհուրդ չեմ տալիս հէնց այժմ գրել զնդապետին և մնացեալներին, որ պատրաստուեն: Լաւ կ'լինէր, եթէ փոքր ինչ սպասէիր:

Գ Վ Գ

Չորեքշաբթի առաւօտեան Տանկրէզը ստացաւ իւր մօրեղօրից հեռեւեալ նամակը. «Սիրելի Տանկրէզ, երէկ ես տեսայ Սիդոնիային և մեկնեցի նորան քո խնդիրը: Աս այժմ սաստիկ զբաղուած է գործերով. նորա հօրեղայրը, որ վարում էր այստեղի բանկի գործերը, մի քանի օր է որ մեռել է, և նա ինքը ստիպուած է առ այժմ կատարել այդ բոլոր պաշտօնները: Այնու ամենայնիւ նա ինձ ասաց, որ դու կարող ես այցելել նորան էգուց ժամը 2 ին, Սիտիում, նա բնակվում է բանկի մօտ, ցեխիկների բակը գտնելը դժուար չէ: Աս քեզ խորհուրդ եմ տալիս գնալ նորա մօտ. նա, ինձ թւում է, լաւ կը հասկանայ քո ձգտումները, որ անբացատրելի են որպէս իմ համար, նոյնպէս և քո հօր համար: Առհասարակ, քեզ հարկաւոր է ծանօթանալ նորա հետ. նամակիս հետ ուղարկում եմ մի թուղթ նորա անունով, որ ասրաձայնութիւն չ'պատահի: Բայց որովհետեւ դու դեռ խակ ես, ես պէտք է յիշեցնեմ քեզ, որ Սիդոնիան երբայական ցեղից է, ուստի նորա հետ Վրիստոսի գերեզմանի մասին խօսելը աւելորդ է: Քո Լսկըդէլ»:

Տանկրէզը գնաց Սիդոնիայի մօտ: Վրիստասարդ մարկիզը

առաջին անգամն էր լինում քաղաքի այն մասում, որ Միտի է կոչվում: Այնտեղ, որտեղ նեղանում է դէպի բանկ տանող երկայն փողոցը, որտեղ կառքերը ստիպուած են ամենայն բուպէ կանգ առնել՝ որ չ'արգելեն միմեանց գնացքը, այնտեղ պատահեց մի փոքր անցք: Յանկարծ Տանկրէզի ականջին հասան սպանալիքների, հայհոյանքի և սաստիկ վէճի ձայներ և միևնոյն ժամանակ լուսեցաւ մի կնոջ ճիչ:

Այդ կինը, որ երկիւղեց աղաղակ էր բարձրացրել, մի սքանչելի գեղեցկագէտ էակ էր: Աորան չըջապատել էին զանազան կառապաններ, դարբիններ և այլն: Ահաբեկուած կինը բոլորովին շփոթուած էր երևում: Տանկրէզը, դուրս գալով իւր կառքից, տեսաւ, որ կնոջ կառքը կտորուած էր և մի անսիրտ ոստիկան համոզում էր գեղեցիկ կնոջը դուրս գալ կառքից, որովհետև կառքի անիւր բոլորովին ճահճախուել էր:

—Ա՛խ, ես ի՛նչ անեմ, ի՛նչ անեմ, գոչում էր կինը և նորա վրդով դէմքի վերայ արտասուք երևեց:

—Այս ունիմ կառք, ասաց Տանկրէզը, մտնեալով նորան, և ուրախութեամբ առաջարկում եմ ձեզ:

Աինը բարձրացրեց իւր գեղեցիկ աչքերը և միանգամայն զարմացաւ, տեսնելով մի վայելչագէտ երիտասարդ այդ խառնիճաղանջ ամբոխի մէջ, որ բազկանում էր կոպիտ կառապաններից, անսիրտ ոստիկաններից և կեղտոտ, անամօթ

մարդերից: Աինը միայն չէր, նորա մօտ նստած էր մի բեխաւոր մարդ, որ ըստ երևութիւն օտարազգի էր: Այս վերջինս փորձեց սաստել ամբոխին և սկսեց կառապանների հետ խօսել ֆրանսիացւոց լեզուով: Այդ արդէն չարից դուրս զայրացրեց չըջապատողներին և ամբոխը վճռեց, որ այդ բեխաւորը ինքը Պօն Վարդունն է:

—Ա՛հ, ինչպէս բարի էք դուք, մեղմութեամբ պատասխանեց կինը Տանկրէզին:

Տանկրէզը բացեց իւր կառքի դուռը, նստացրեց կնոջը և հրամայելով իւր ծառաներին անխօս կատարել անձանօթ կնոջ հրամանները, ինքը խեղոյն անհետացաւ ամբոխի մէջ, որովհետև փողոցի հոսանքը սկսել էր շարժուել և սիրոյ խօսքեր ասելու ժամանակ չէր:

Հասնելով հրապարակը, նա կանգնեց Մենտօն Հաուզի առաջ, որ լօրդ-մեռի պալատն էր, բարեռք համարեց հարցանել հաղարաւոր անցորդներից մէկին, թէ ո՞րն է բանկը:

—Ահա բանկը—ձեր առաջն է, բարեսրտութեամբ պատասխանեց անցորդը, հետաքրքրութեամբ նայելով շքեղ հագնուած երիտասարդի վերայ: Ահա բանկը, ձեզ ի՛նչ է հարկաւոր, ես ինքս—էլ այնտեղ եմ գնում:

—Ինձ ո՞չ թէ բանկն է հարկաւոր, այլ այստեղ, կարելի է դուք իմանում էք, ցեխիների Բալը կայ:

—Ինչպէս չէ՛, ՚ի հարկէ, ժպտալով պատասխանեց անցորդը: Աւրեմն դուք կամենում էք տեսնել Աիզոնիային:

(Ալ շարունակէ):

ՀԱՅԱԲՆԱԿ ՔԱՂԱՔՔ

ՕՊԻՒՌՆԵՒՆ

Երբ ինձ ցուցցես, Ըզմիւռնիս,
 Կրկին ըզքոյդ նաւահանգիստ:
 Աւաղ, ՚ի քէն կամ ՚ի բացեայ,
 Ի շէն թէև յարձականիստ:

Ի քեզ ծընայ, ՚ի քում ծոցի
 Սընայ, հասի յառոյդ ՚ի տիս:
 Քեզ, շարժարանդ իմ օրոցի,
 Չօնել փութամ. սուզ գրբուատիս:

Քանի՛ գիտեմ, հեղահնչիւն
 Մայիսն ՚ի քեզ շնչէ Զեփիւս:
 Յոսկէնըջոյլ շող Արեւուն
 Ծածանէ ծով զալիսն ՚ի սփիւս:

Զոյր ոչ մերժէ սրբաի զթախիծ
 Կապուտերանգ Բաշաիդ ծիծաղ:
 Ար յիւր պրտոյտ ոլորտագիծ
 Մերթ ծրփծրփայ, մերթ կայ խաղաղ:

Անդ բաղմանիստ նաւք շար առ շար
 Կեղայօրէն պարզեն Սիզնօն:
 Ի ցունց երգոց փանդըռնահար
 Նաւաստք պարեն, խըմբին ՚ի տօն:

Ո՞ ինձ ո՞ տայր թըռիչս ՚ի թե՛
 Սրանալ, ՚ի տես գալ հանգիսիդ:
 Սրանալ տենչամ, չեցեմ թէև
 Ո՛չ նեղեաւ, և ոչ Ասիդ:

Ըզքոյդ պըճնէ քաղաքածայր
 Շուրջ ծառատունկ սաղարթագեղ:
 Ար ոստ յոստոյ ծիծառունքն ՚ի ծառ
 Ոստուն, երգեն քաղցր ՚ի գեղգեղ:

Զարս՝ ըզկանայս ածէ ՚ի զբօս՝
 Կամուրջն ՚ի նմա կամարաչէն,
 Ար նոճ, ուռի, կաղամախ, սօս,
 Յանոյշ փըչիւն հողմոյն շըրշէն:

Մտեր Մտերեանց:

Այսպէս նկարագրել էր հանգուցեալ Մսիւր Մաղխարոս Մսիւրեանցը իւր ծննդեան Օմիւռնիա քաղաքը իւր ոտանաւորներից մինի մէջ, որ պատշաճ համարեցինք ընդօրինակել այս տեղ:

Օմիւռնիա քաղաքը Փոքր Ասիոյ ամենամեծ Հայաբնակ քաղաքներից մինն է և մեր Տաճկաստանի Հայոց մտաւոր զարգացման և լուսաւորութեան

կեդրոն էր մէկ ժամանակ: Այս տեղ սկսաւ հրատարակվել ազգիս անդրանիկ լրագիրն «Արշալոյս Արարատեան», այս տեղ ծնան և բնակեցան ազգիս քանի՛ քանի՛ երևելի հեղինակները և հայկաբանները, այս տեղ վերջապէս ծնած է համարվում և անմահ հումբրոս... Իսկ այժմ, այժմ ո՛, ցաւալի է ոչ միայն ասել, այլ մտածել անգամ...»



ՉՄԻՌՆԻՆ ԳԱՂԱՔ: || ГОРОДЪ СМІРНА.
 (պատկերիս քիչէն պատրաստեցաւ յատուկ մեր հանդիսի համար):

Չմիւռնիա քաղաքը՝ յարաաբուստ այժմ շատ ու շատ գեղեցկացած է և մեծացած, գեղեցիկ ծովեզերեայ քառափով և մեծամեծ աներով զարդարուած, սրճարաններով և թատրոններով ճոխացած. իսկ ՚ի ներքուստ, գալով մեր ազգային երիտասարդութեան, անկարելի է չցաւիլ նորա բռնած ճանապարհի վերայ: Պարզ իզմիրի նոր երիտասարդութեան, գրում էր մեզ մեր թղթակիցն իւր վերջին նամակներից մինի մէջ, ամաշխարհ կրնամ ըսել թէ ազգային եռանդ, զգացում, ոգի ընթերցասիրութեան, — այս բառերը հեռու է իրենցմէ և ոչինչ նշանակութիւն ունին. ամենքը գրեթէ երկոյները քառափուկքը կը ժողովուին, սրճարան կամ թատրոն կերթան, և այն տեղ կը խօսին մի միայն +էջֆէ վրայ և ուրիշ ոչինչ: Եթէ ազգային խնդիր մը բանաս՝ ո՞ր, մենք այդպիսի բաներէ տեղեկութիւն չունիմք՝ կրանն ու կը փախչին: Գրեթէ բոլոր զբոսավայրերը կամ ո՞ր և է ընկերութեան

մէջ, եթէ մի օտարական անգամ դտնուի, Հայն կատիպուի նորա լիզուն գործածել և կամ Տաճկերէն խօսիլ: Եյս մի ցաւալի վիճակ է, և իզմիրցոցս համար՝ մի նախատինք: Իզմիր Տաճկաստանի ամենէ քաղաքակրթեալ քաղաքն է, և տեղոյս Հայը մեծ համբաւ ունեցած է անցելոյն մէջ: Ընթերցարան մի ունի, գրեթէ 2—3 հազար հատոր գիրք կայ անոր մէջ ամեն լիզուէ, և abonnement տարեկան դինն 12 Ֆրանք է, ան ալ գրեթէ գոցուելու վիճակի մէջ է, ընթերցող չկայ. երկոյները լոյսեր կը վառին նստարաններու ու ճանճերու համար... Ընդամենը ներկայացում մի տուին ՚ի նպաստ ընթերցարանին, երեք շաբթուան մէջ գրեթէ հազու 200 Ֆրանք (50 ուրբ.) հասոյթ ունեցաւ: Եհայս է այս տեղի ազգայնոց վիճակը: Եթէ Պ. Գրիգոր Նիկողոսեան այս տեղ գայ՝ արդեօք ի՞նչ պիտի ընէ: Պօլսեցին որչի հաւանեցաւ և մրտոեց, ալ մեզն չ'գիտեմ ո՞ր կը թաթիտէ...»:

Շ Ա Մ Ա Խ Ի

(Մէկ ուրիշ ճանապարհորդի նամակէց):

ՇԱՄԱԽԻՆ Ենդրիփկասի ամենահին քաղաքներից մինը, յիշատակվում է պատմութեան մէջ առկաւին վեցերորդ դարի սկզբում, իբրև մայրաքաղաք Էրզրան-Էրզրի: Եյնու ամենայնիւ այնտեղ չ'կայ և ոչ մի պատմական յիշատակարան բաց ՚ի մի Սուլթանական մզկիթից, որ վերագրում են Նուշերվանին և որը շատ գեղեցիկ պահպանուել է մինչև այսօր, չ'նայելով շատ անգամ պատահած երկրաշարժութիւններին:

Շիրամպահուութիւնը կազմում է քաղաքի բարեկեցութեան զիտաւոր ազգիւրը: Եպրշումէ գործուածքների գործարաններ գտանվում են այստեղ անյիշատակելի ժամանակներից ՚ի վեր և տակաւին յիսներորդ թուականներում ոստանների թիւը հասնում էր եօթը հարիւրի: Բայց այժմ այդ գործն ևս մինչև անգամ շատ ընկած է մի կողմից ապրշումի անառատութեան պատճառաւ, որ տւում է մի քանի տարի անընդհատ, և միւս կողմից այլազգի վաճառականների շնորհիւ, որոնք գնում էին ամենալաւ կոկոնները այնպիսի թանգ գնով, որ բոլորովին ձեռնաու չէր տեղացի արդիւնագործերի համար: Վաղաքի ամենալաւ գործարանը, որ հիմնուած է գեա Խաների տիրապետութեան ժամանակ և որ այն միջոցին ունենալով 50 ոստաններից աւելի, այժմ բաւական պակասացրել է իւր արդիւնաբերութեան չափը, պատկանում է Տարայէվ եղբայրներին: Գրանցն է նոյնպէս այստեղի ապրշումէ

գործուածքների ամենալաւ գրպակը: Երդիւնաբերութեան եղանակը, թէև նահապետական ձև ունի և ձեռքով է կատարվում, սակայն մի քանի գործուածքները գործիւնակ, կանանց սպիտակ շաւերը, շարժիւրը, թաշկինակները, և այլն, շատ շքեղ են և եւրոպական ճաշակին յարմարեցրած են: Տարահիւների գրպակը տեղային ամենահասարակ գրպակներին նման է գեանատարած խաիրների և գորգերի վերայ ծաղապատիկ նստած են լուսնի նման ալեզարդ մօրուսներով Տարայէվ եղբայրները: Նայելով ապրանքները և խօսելով տեղային արդիւնաբերութեան մասին, ես շատ զարմացայ, երբ ինձ ասացին՝ որ հայազգի Տարայէվները լուտերական են և որ Էամախում նոցա հեռուողների թիւը սակաւ չէ: Գորա մասին ես իմացայ հեռեւալը:

1828 թուին Բաղէլից եկել են Սովկաս լուտերական միսսիօնարներ, որոնք իւրեանց գործունէութիւնը սկսել են նախ Էուշի քաղաքում, որտեղ տարածել են բնակիչների մէջ տեղային բարբառներով թարգմանուած Եստուածաշնչի հազարաւոր օրինակներ և հիմնել են մի ուսումնարան, որ 100,000 ու աւել է նստել նոցա վերայ: Մի քանի տարուց յետոյ միսսիօնարները ստիպուած են ելլել թողնել Սովկասը և հեռանալ իւրեանց երկիրը:

—Ի՞նչ նոդատակի հասաք դուք, այդպիսի ահազին փողեր և այդչափ ժամանակ կորցնելուց յետոյ, հարցանում էին Բաղուում միսսիօնարներին, որոնք

արդէն վերադառնում էին իւրեանց հայրենիքը:

— Առ այժմ մենք միայն ցանում ենք, պատասխանեցին սուրբ հայրերը, հունձը ազգապայում կը ստացուի:

Եւ իրաւի, համարեա թէ երեսուն տարուց յետոյ, այսինքն 1857 թուին, Շամախու Հայերի մէջ ծագեց մի տեսակ կրօնական ձգտումն, կամ լաւ ևս ասել, երերումն յօգուա լուսերականութեան, որի գլխաւոր գործիչն էր տեղացի բնակիչ՝ Սարգիս Համբարձումեանը: Նորահասակների թիւը օրէցօր շատանալով, կարճ միջոցում կազմուեց մի խումբ երեք հարիւր հոգուց բաղկացած, որ չէր ընդունում Ղուսաւորչականութիւնը և այդ պատճառաւ հարածվում էր իւր նախկին հաւատակցներից: 1862 թուին Համբարձումեանի հետևողները մերժուեցան հայոց եկեղեցուց և մի քանի տարի շարունակ հայոց հոգևորականութիւնը ոչ միտում էին նոցա երկխոսութիւն, ոչ պսակում էին նոցա և ոչ ևս թաղում, յուսալով այդ միջոցով վերադարձնել նոցա թողած եկեղեցու ծոցը: Բայց հայոց հոգևորականութեան բոլոր ջանքերը զուր անցան և հարածանքների հետևանքը այն եղաւ, որ նոքա վերջապէս պաշտօնական իրաւունք ստացան իւրեանց կրօնը դաւանելու: Այդ դէպքը տեղի ունեցաւ 1866 թուին: Այժմ (1874 իիւ), լուսերականների թիւը Շամախում հասնում է 600 ի. նոքա ունին այն տեղ մի եկեղեցի և մի ծխական դպրոց:

Իմ գալստեան միւս օրը կիւրակէ էր: Օգուա քաղելով այդ հանդամանքից եւ այցելեցի լուսերականների եկեղեցին, որ ժողովուրդը անուանում է «Ժողով»: Վորա արտաքին ձեւը, իրաւի, բոլորովին նման չէ լուսերական եկեղեցիներին: Վաս մէկ հասարակ միյարկանի, աաշած քարից շինած և երկաթէ կաուրով ծածկած, տուն է, որ ոչ խաչ

ունի և ոչ զանկակատուն (լուսերական հայերը ասում են որ աղօթելու ժամը ամենին յայտնի է, ուստի ցանկացողները կարող են գալ եկեղեցի իւր ժամանակին): Տան առաջ շինած է մէկ լայն, ձեղունաւոր դալէրէա, որ տանում է դէպի մի ահագին, ծաղկոցներով զարդարած, պաաշգամբ: Վալէրէի կողքի դռները տանում են դէպի տալոց և օրիորդաց դպրոցները, իսկ միջինը տանում է ժողով, որ մի ահագին, մերկ պատերով սրահ է և որի միակ զարդը կազմում են ոսկեպղնձեայ ջահերը: Վորդերով զարդարած յատակի վերայ աւսիական ձեւով նստած էին տղամարդիկ, առաջին կարգում երկխոսներն էին: Սրահի խորքում կանգնած էին հայ կանայք իւրեանց գոյնզգոյն սալշումէ և ոսկիներով զարդարած զգեստներով: Մուտքի մօտ ցանկացողների համար աթոռներ կան դրուած: Ամենից՝ առաջ, մի փոքր սեղանի մօտ, որի վերայ դարսած էին զանազան գրքեր, կանգնած էր Սարգիս Համբարձումեան, մի աղեղարդ ծերունի՝ համակրական, խելօք և ազուր դէմքով: Իմ մտնելու ժամանակ, ինչպէս յետոյ իմացայ, նա քարոզում էր «կրթութեան անհրաժեշտութեան վերայ»: Հայերէն չ'իմանալով եւ, ՚ի հարկէ, ոչ մի խօսք չ'հասկացայ նորա քարոզից: Բայց քարոզի եղանակը և այն յափշտակութիւնը, որով խօսում էր ծերունին, նորա արայայայիչ ձեւերը և զեղեցիկ արտասանութիւնը մինչև անգամ իմ վերայ մեծ ազդեցութիւն ունեցան: Պաշտօնը վերջացաւ սաղմոսների հանդիսաւոր երգեցողութեամբ, որին մասնակցում էին նախ մի միայն կանայքը, և ապա առանձին բոլոր աղամարդիկ—այդ երգեցողութիւնը այն աստիճան հիացրեց ինձ, որ եւ մեկնեցայ Շամախուց համարեա թէ յափշտակուած լուսերական Աստուածապաշտութիւնից:

Ա Ն Ք Օ Ն Ս Դ Օ Դ Է

Փ Ա Ր Ո Ս Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի հանդիսի ընթերցողներին յայտնի է Ալֆօնս Վօդէ ժամանակակից գաղղիացի հեղինակի անունը և նորա գործերից մի քանիսը: Ուստի արժան ենք համարում ՚ի մէջ բերել այստեղ նորա համառօտ կենսագրութիւնը և սպազրիւ նորա պատկերը:

Ալֆօնս Վօդէ ծնաւ Վաղղիոյ Նիմ քաղաքում: Նա եկաւ Փարիզ 1857 թուականին տասնևեօթնամեայ հասակում, քանի մի Փրանկով միայն քսակի մէջ, բայց յոյսերի հարուստ պաշարքով սրտին մէջ, և իւր դեռ չյայտնուած տաղանդով: Բնակում էր Փարիզում նորա մեծ եղբայրը: Լչրնէստ

Վօդէ նոյնպէս հեղինակ էր, բայց դեռ չէր ցոյց տուել առանձին ձիրք: Վօդէ վաղուց մտածում էր Փարիզի վերայ. այդ քաղաքը երևում էր նորա աչքում իբր աւետեաց երկիր: Բայց շուտով հարկադրուեցաւ նա վարել այն տեղ այն թափառական կեանքը, որ երգեց Միւրժէ, որի համար չկայ վաղուան օրը, որ սպրում է այսօր վաղը, կոպէկ կոպէկով, առանց ցանելու և առանց ժողովելու շտեմարանների մէջ, երկնքի թռչունների նման: Լիներով արձակաբան (արձակ շարագրութիւն գրող), Վօդէ պօէա էր սրտով: Եւ այդ պօէտիկական հոսանքը տալիս է նորա գրուածներին առանձին

գեղեցկութիւն և ոգի. նոյն իսկ պօէտիկական հո- սանքին մենք պարտական ենք, որ նա բաշխեց գրա- կանութեան մի փոքրիկ հատոր իւր բանաստեղծա- կան գրուածներէ:

Նորա գործերից առաջինը գնահատուեցաւ միայն գիտուններից. ընդհանուր ամբոխն մնաց անտարբեր. ընդհակառակն առաջիններն միանգամից հասկացան՝ որպիսի յոյսեր է տալիս երիտասարդ պօէտը և որ- պիսի տալանդ թագուցուած է նորա մէջ:

Լէժիտիմիստ՝ նա անկարելի էր համարու՞մ ծառայել Վայսեր նախարարի մօտ: Մօրնի հանգստացրեց նորան: Նա յօժարեցաւ նայել նորա մազերի վերայ մատերի միջեց. բայց ինչ վերաբերու՞մ էր սպիտակ դրօշակին երկրպագութեան մասին, նա՛ որպէս օրի- նակ՝ ցոյց տուաւ Եւգէնիա թագուհու վերայ, որ իւր համոզմունքներով նոյնպէս լէժիտիմիստներից էր: Այսպէս Վօդէ անսպասելի կերպիւ ատենադպիր դարձաւ զբոխն, սկսաւ լաւ ուժիկ ստանալ և



ԱԼՖՕՆՍ ԴՕԴԷ: | АЛЪФОНСЬ ДОДЭ.
(Պատկերս նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

Գուքան Մօրնի, որ սիրող էր պօէզիայի, հե- տաքրքրուեցաւ երիտասարդ պօէտով և հրաւիրեց նորան իւր մօտ: Վօդէ եկաւ նորա մօտ և զարմա- ցրեց նորան իւր գլխի խառնիխուռն չ՛սանարուած երկար մազերովն: Գուքար առաջարկեց նորան ա- տենադպրի պաշտօն, բայց և հասկացրեց նորան՝ թէ աւելորդ լինելու չէր խուզել փոքր ինչ մազերը: Վօդէն որ լսեց այս իսկոյն վեր թռաւ. նա անմաս- չելի էր համարու՞մ իւր մազերը: Եւ լինելով

վարել շատ հեշտ պաշտօն:
Ելժմ Վօդէ ապրում է իւր սիրեցեալ Փարի- զում: Նա ամուսնացած է և նորա ամուսինն նոյնպէս անտարբեր չէ գրականութեան: Շատ ան- գամ նա աշխատում է իւր ամուսնու հետ: Բազ- դաւոր անձինք: Վօդէ ամառը անցնում է Փարիզի մօտին եղած իւր փոքրիկ տան մէջ, ուր և գրում է իւր գեղեցիկ շարագրութիւնները, որովհետև ձմեռը որպէս նորան, նոյնպէս և միւս բոլոր երեւելի

հեղինակներին, Փարիզի մէջ, հիւրերի պատ-
ճառաւ բնաւ անկարելի է լինում գործով պա-
րապիլ:


Ալֆօնս Գօդէ, հեղինակն «Նաբօբի», «Արտսեր
Ֆրամօնի», «Ժպի» և այլն, ժամանակիս տաղան-
դաւոր բումանիստներեց մինն է համարվում: Նա,
Ջօլայի նման, թէպէտ և պատկանում է գաղղիոյ
բէալիստների շարքին, բայց նորա բէալիզմը բոլո-
րովին այլ է, քան «Նանայի» հեղինակի բէալիզմը:
Նա աւելի շուտ նմանում է Անգղեացի հեղինակ

Գիբբէնսին, կամ Ռուս հեղինակներին, որպիսի են՝
Թօլսթոյ, Թուրգենեվ, Գօնչարով: Նա ցոյց է
տալիս մեզ մերի իրականութիւնը ոչ որպէս լու-
սանկարը, այլ որպէս նկարիչը, որ նկարում է
պատկերները ազդելով մարդոյ հոգու վերայ և խոր
արմատացնելով նոցա մարդոյ մտքի մէջ:

Մենք շատ ուրախ ենք, որ ուրիշները ևս
«Փարոսին» հետևելով՝ սկսան աշխատել նորա
գործերի թարգմանութեան և հրատարակութեան
վերայ հայերէն լեզուաւ:

ՄԿՐՏԻՉ ՅՈՎՍԷՓԵԱՆ ԷՄԻՆ

ՊԵՐՍՍՈՍԵՆԵՆԻ
Ջուղայ քաղաքում
ծնած, իւր ուսումը ու
գիտութիւնը Ռուսիոյ
Մոսկուա մայրաքաղա-
քում ստացած, ներկայ
ժամանակիս յայտնի
ուսումնական և պրո-
ֆէսսոր Հայ մատենա-
գրութեան Ազգարանի
Ղեկավարանին մէջ, Աւ-
րոպիոյ լուսաւորեալ
աշխարհին ծանօթ իւր
թարգմանութիւններով
Հայ հին մատենագիր-
ների և հետաքրքրական
խուզարկութիւններով
Հայ լեզուի և պատմու-
թեան մէջ, և վերջապէս
դաստիարակական աս-
պարիզում նշանաւոր
տեղ բռնած՝ — սա է
ահա պ. Մկրտիչ Յով-
սէփեան Էմին, որի գե-
ղեցիկ կենդանագիրը Փարոսը պարտք համարեց իւ-
րեան ապագրել այսօր իւր էջերի մէջ:



ԳԻՏՆԱԿԱՆ ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆ:
ПРОФЕССОРЪ Н. ЭМИНЪ. || PROFESSEUR M. EMINE.
(Պատկերս նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

Ում յայտնի չէ պ. Մկրտիչ Էմին: — Կարծում
ենք, հաստատ, թէ դժուար կը գտնուին Ռուսա-
ստան և հաճկաստան անձինք, որք չճանաչեն և
կամ լսած չլինեն նորա պատուական անունը: Հա-
տերին անապարհոյս յայտնի է նա որպէս նախկին
Տիսուշ և Պրոֆեսսոր Ազգարանի Ղեկավարանի մէջ,
և շատերին իր գիտուն Հայկարան և քաջ Թարգ-
ման Հայերէնից Ռուսերէն: Թէ այսպէս և թէ
այնպէս, կարծում ենք, որ նորա այսօր տպա-

գրուած կենդանագիրը,
և այս մեր քանի մի
սողը սիրով կընդու-
նուին մեր համազգի-
ներից, մանաւանդ նորա
անհամար աշակերտանե-
րից, որոց մինն է և
այս սուղերիս գրողը:

Թուել այս տեղ պ.
Էմինի գրականական
բոլոր աշխատութիւն-
ները մենք աւելորդ ենք
համարում, մանաւանդ
որ Փարոսը միշտ ծանօ-
թութիւն տուած է նո-
ցա մասին իւր էջերի
մէջ: Ուստի մնում է
մեզ այժմ մտղթել մեր
պատուելի և սիրելի ա-
լիզարդ պրոֆեսսորին
երկար օրեր շարունա-
կելու իւր գեղեցիկ գրա-
կանական երկասիրու-
թիւնները Հայ մատե-

նագրութեան ասպարիզում, հարստացնելով նորան,
ըստ առաջնոյն, նորանոր խուզարկութիւններով և
քննութիւններով, և ցանկալ, որ նա սկսէ այսու-
հետեւ բաշխել մեզ իւր երկասիրութիւնները ոչ
միայն Ռուսաց և Ֆրանսիացեաց լեզուներով, ինչ-
պէս սովոր էր անել մինչև ցայժմ, այլ նաև մեր
բուն իսկ Հայկական բարբառով: Յիշէ՛ք արդ-
եօք և այն փափագը, որ ունին շատերը տեսա-
նելու նորա գրչից դուրս եկած մի գեղեցիկ և ճոխ
Ռուս-Հայ բառարանի, որի մէջ մեծ կարօտու-
թիւն կայ:

Պ. Մկրտիչ Լամին ծնած է 1814 թուին, ունի այժմ Կերգործական Պետական Խորհրդականի աստիճանը, և՛ բաց ՚ի ուրիշ մանր շքանշաններից՝

ունի նաև Սրբոյն Վլադիմիրայ երրորդ և Սրբոյն Սթանիսլավայ Առաջին աստիճանի շքանշանները: *)

Ձ. Մ.

ԶՕՐԱԿԱՆՔ ՎԱՐԴԱՆԱՅ

Հուս հնչեցէք անուշաձայն,
Եղբարք, փողեր մեծ մարտի:
Մենք պատրաստ ենք և միաբան,
Զոհվել ՚ի սեր Յիսուսի:

1879.

Մեղ չէ կարող արդ վախեցնել
Ո՛չ հուր, ո՛չ մահ և ո՛չ զէնք,
Որովհետև լաւ է մեռնել,
Քան ուրանալ մեր օրէնք:

Սարգսիսեանց:

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԲԱՌԱԳԻՐՔ Ի ԳԱՂՂԱՐԵՆ ԼԵՁՈՒԷ Ի՛ ԶԱՅԵՐԵՆ

ՆՈՐԱՅՐԻ ԲԻԻԶԱՆԳԱՅԻՈՅ:

Կ. Պօլիս, 11 Հոկտ. 1881.

ՔՐՈՍԻ այս տարուան Սեպտեմբեր-Հոկտեմբերի տետրին մէջ համառօտիւ ծանուցած էիք իմ Գաղղիարէն-Հայերէն բառարանիս հրատարակութիւնը, և միանգամայն ստորագրութիւն բացած էիք ազնուութեամբ: Ար փափագիմ Ձեր Հանդիսին միջոցաւ քանի մը կարևոր տեղեկութիւններ տալ նորատիպ բառարանի մասին, յուսալով որ մերազգի ուստիաբնակ զրագէտք ըստ բաւականի գաղափար կը ստանան իմ գործոյս վրայ և կը յօժարին բաժանորդ գրուիլ այնմ:

Ամբողջ բառարանն պիտի բաղկանայ 150—160 քառածալ թերթերէ, որ պիտի կազմեն զրեթէ 1250—1300 էրես: Առաջիկայ շաբթուս մէջ պիտի հրատարակի 73-դ թերթն, որ կը հասնի մինչև ՚ի բառն Galopade: Առ այժմ շաբաթը մէկ թերթ կը հրատարակի բայց տպագրիչս, Մեծ. Պ. Յակոբ Պոյաճեան, կը վստահացնէ զիս որ քիչ ժամանակէն, երբ որ երրորդ շոգեշարժ մամուլ մը հաստատէ, մէկ ամսուան մէջ առ նուազն զոնէ 6 թերթ կարելի պիտի ըլլայ ՚ի լոյս ընծայել: Տպագրական ծախուց համար հաշիւ հղած է 1.000 Օսմանեան լիրա, այսինքն 23,000 Ֆրանգ. մինչև 70-դ թերթն 445 Օսմանեան լիրա ծախք հղած է, ըսել է 10,235 Ֆրանգ, մինչդեռ 200 բաժանորդներէ ստացած եմ 336½ Օսմանեան լիրա, այսինքն 7,739 Ֆրանգ: Կ. Պօլիս օգնեց ինձ որչափ որ կարելի էր այս նեղ և վատթար ժամանակիս մէջ. այժմ աչքս կը դարձրնամ Ռուսաստանի մերազնեայց, խնդրելով իրենցմէ

որ ձեռն կարկառեն առ իս՝ յաջողութեամբ աւարտելու համար ինչ որ սկսայ և զրեթէ մինչև ՚ի կէսն հասուցի:

Կ. Պօլսոյ համար բաժանորդագրութեան զինն է 1½ Օսմանեան լիրա, ըսել է 34½ Ֆրանգ. իսկ Ռուսաստանի համար որոշուած է 20 ռուբլի: Ո՛վ որ կը վճարէ 20 ռուբլի, իրաւունք կ'ունենայ ստանալու մի օրինակ Գաղղիարէն-Հայերէն Բառարան կազմեալ և առանց ճանապարհի ծախուց բաց ՚ի Բառարանէն կը ստանայ նաև յոյ մի օրինակ իմ Հայկական Բառարան-Երեսն երկասիրութիւնէս, որու մէջ ուղղեալ են Եզնկայ, Ազաթանգեղի, Փ. Բիւզանդայ, Խորենացոյ, Ղ. Փարպեցոյ, Սեբէոսի, Թ. Արծրունցոյ, Արիստակէս Ասատիվրացոյ, Մխիթար Գոշի, Մխիթար Հերացոյ, և այլն և այլն, տպագրեալ գործոց վրիպակ և աղճատեալ ընթերցուածները: Հայ մասնագրութիւնը և լեզուն մշակողներու համար յոյժ պիտանի կրնայ ըլլալ իմ Բառարան-Երեսն: Ազնիւ Պ. Գ. Նիկողոսեան Մշակ սիւնակներուն մէջ կովկասու Հայոց ուշադրութիւնը հրաւիրեց իմ դժուարին ձեռնարկութեանս վրայ: Պ. Գ. Նիկողոսեանի կը պարտիմ առ այժմ երկու բաժանորդ, Պ. Վաջունի Յակոբ և Պ. Աբիսողոմեան Նիկողայոս, որոց առաջինն ՚ի Պաթումէ, իսկ երկրորդն ՚ի Վուպայէ (Տաղստան) առաքեցին ինձ 20-ական ռուբլի: Յոյս ունիմ որ 100 բաժանորդ կը ստանամ ՚ի Ռուսաստանէ **):

*) Տփլիսից մեզ գրում են՝ թէ Պ. Էմինի հին աշակերտները առիթ քաղելով նորա Հնագիտական Ժողովում գտանուելուց, Սեպտեմբերի 22-ին մեծ ճաշ են տուել ՚ի պատիւ նորա և իրենաց մէջ գումար հաւաքելով մշտնջենական սփայնեալ նշանակել են նորա անուան Տփլիսու Գայիանեան Օրիորդաց Ուսումնարանում:

**) Բաժանորդք պէտք է յուղարկեն իրենց ստորագրութեան գինը ՚ի Կ. Պօլիս հետեւեալ երեսագրով. „M. M. G. A. Samandji-Mongian banquiers, 4, Mehmet-Ali pacha Han, Galata, Constantinople.“—Մեծ. Տեարք Գ. Ա. Սամանճի-Մոմճեան մեծաւ ազնուութեամբ յանձն առած են աւանդապահ ըլլալ բաժանորդաց դրամոյն:

Բսեմ քանի մը խօսք ալ Բառարանին ընդհա-
նուր յօրինուածոյն վրայ:

Իմ գլխաւոր նպատակս եղած է արդի Հայերէն
լեզուի պահանները լրացնել հին Հայերէնի ձեռն-
տուութեամբ: Փոխանակ նոր բառ նոր ոճ ստեղ-
ծելու, աշխատած եմ փնտռելու մեր նախնեաց
լեզուին մէջ գաղղիարէն բառերու և ոճերու հա-
ւասարները, և ուրախութեամբ կրնամ յայտարարել
որ իմ խուզարկութիւնքս շատ անգամ ամենայն-
ջող արդիւնք ունեցած են: Բայց ասով հանդերձ
հնութեան կոյր սքանչացումը չունիմ. ուր որ
գտած եմ ընտիր բառ մը, վայելուչ ասացուած մը,
ըլլայ հին, ըլլայ նոր, ըլլայ ուսուցիչ, ըլլայ գա-
ւառական, առանց ամենեւին վարանելու անցուցած
եմ իմ բառարանիս մէջ: Մեծ փոյթ ասրած եմ

Հայերէն բառերուն նշանակութիւնքը ճշգրտու. առ-
այս ոչ սակաւ օգնած է ինձ Վիտրէի քառահատոր
բառարանն, զոր առաջնորդ ընտրած եմ ինձ: Իսկ
գաղղիարէն բառերու ուղղագրութեան և քերա-
կանական զժուարութեանց մասին՝ հետեւած եմ
Պաղղիական Ակադեմիոյ բառարանին վերջին տպա-
գրութեան, որ հրատարակեցաւ յամին 1878: Իմ
բառարանս կը տպուի Ֆիուսի ազնիւ թղթոյ վրայ
և այնպիսի մաքրութեամբ որ Վ. Էնեակոյ Միսիթա-
րեան Հարք անգամ խոստովանեցան թէ իրենք
չէին կրնար քան զայս լաւ տպագրել:

ԴՊՐԱՅՐ Ն. ԲԻՆՆԻՊՐԱՅԻ:

Ի՞նչ հասցեն. „M. Néandre de Byzance (Norayr) aux bons soins de
M. M. G. A. Samandji-Momgian, banquiers, Galata, Constantinople“.

Հ Ա Յ Կ Ա Ջ Ն Ե Ա Ն Տ Ա Ր Ե Փ Ի Ր

ԱԶԳԱՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս. 17 Հոկտեմբերի 1881 թ.:

Մի տենդ կայ այս միջոցիս ամեն Հայու վերայ:

„Հայկական հարցով“ զբաղելու տենդն:

Հայն ուրիշ խօսակցութեան նիւթ չունի, հայ օրագիրն
չբարէ իւր թերթն ընթերցանելի անել՝ եթէ չըպարու-
նակէ այս վերնագրով մի յօդուած: Ետերն կ'ասեն և
կըզրեն անգամ թէ այժմ ուրիշ ինդիրներով զՀայն զբա-
ղեցնելն՝ մի անգին ժամանակի կորուստ է, փնասել է ազգա-
յին շահերուն և ՚ի զուր երկպառակութիւն սերմանել է
նորա մէջ: Մի Հայ, կասեն, որ ճշմարտապէս կըսիրէ
„իւր հայրենիքն պէտք է Հայկական հարցին միայն կարևո-
րութիւն տայ այժմ, ապա թէ ոչ եթէ այս առիթն կո-
րուսանեմք, մեք ևս կորուսեալ եմք ՚ի յաւիտեան“:

Եթէ մի որ հարցանէ այդ պարոններէն միոյն.

— Բարեկամ, ի՞նչպէս պէտք է անել Հայկական հար-
ցով զբաղեալ լինելու համար: Պու ինքը ի՞նչ կը գործես
զայն յառաջ մղելու և նորա յաջող ելքին օժանդակելու
համար“:

— Ի՞նչ կամիս որ անեմ, պէտք է պատասխանէ նա,
եթէ անկեղծ է: Ես այդ հարցի վերայ օրն կէս ժամի
չափ կը մտածեմ և չորս ժամէն աւելի կը խօսիմ բարե-
կամներու հետ“:

— Յետոյ“:

— Ի՞նչ յետոյ, ահա այսչափ... Հա՛, մոռացայ, Journal
d'Orient ի ևս վեցամնեայ բաժանորդ գրուեցայ: Ե՛ղբայր,
ես մի մարդ եմ, ի՞նչ կարող եմ ասկէ աւելին անել:
Թող ամեն մարդ ինծի չափ իւր պարտաւորութիւնն կա-
տարէ և Հայաստան ազատեցաւ պրծաւ“:

— Նապա մեր ներքին գործոց կարգադրութիւնն, մեր
Վարչական վարժար ընթացքն“:

— Նիւնայ այդպիսի բաներու ժամանակն է: Հայկական
ինդիր կայ այժմ, ես ուրիշ բան չը գիտեմ“:

Յիրաւի, չասեմք միամտութիւն, այլ անարգարութիւն է
Հայ ժողովուրդեան ընդհանրութենէն աւելին յուսալ Հա-
յաստանի արդարեւ բարենորոգմանց ինդրոյն նկատմամբ:
Մոյն իսկ Գործիչ ասուածներուն մի ամենափոքր մասն միայն
կարող է այս ինդրոյն մէջ իւր գործունէութիւնն ազդու
անել: Բնդհանրութեան դերն կրաւորական և եթ կարէ
լինիլ, քանի որ քաղաքականապէս կազմակերպեալ մի ժո-
ղովուրդ չեմք տակաւին: Չըզգալ զայս և ոմանց պէս ցոյց
տալ ինքզինքն թէ կը գործէ, օգնել է ինդրոյն ինչպէս
ձանձն կ'օգնէր երբեմն հասարակաց կառքին սորա մի զա-
ռիկեր ելած ժամանակն:

Ենչուշտ շարունակ է ամենուս այն ապագան զոր կըխոս-
տանան Հայաստանի, քաղցր է մեզ յուսալ թէ նա մի
օր ոչ ևս ասպարէզ պիտի լինի ամեն հակամարդկային
զեղծմանց: Բնական է դարձեալ ամեն Հայու երազել իւր
հայրենեաց համար ամեն տեսակ բարեւ, բայց այն որ նե-
րեալ չէ՛, այն որ զգծութեան դէմ է կատարելապէս,
թողուն է անցնիլ օրեր և տարիներ առանց մեք մեր ներքին
վերաց ստածմանն զբաղելու, առանց աշխատելու ըստ մեր
կարեաց գործել ինչ որ ապացոյցով գիտեմք որ կարող եմք:


Երեք տարիէ աւելի է Հայաբնակ գաւառաց Բարենո-
րոգմանց պէտքն իբր միջազգային մի վճիռ արձակուած է,
և այսօր տակաւին ոչ որ գիտէ թէ ի՞նչ եղանակաւ կա-
րելի է զայնս ձեռք բերել: Տակաւին մի Կոմիտէի յղման
առաջարկութիւններ կը լինին, տակաւին կոմիտէութեան
ինչ լինելուն վերայ չեն տեղեկացել: Սորա յառաջ բերած
արդիւնքներն պիտի քննուին նախ՝ յորմէ հետէ կրկին բա-
նակցութիւնք պիտի լինին հարկաւ և այն ժամանակ աւելի
հզօր միջոցներու պիտի գիտեն... Եթէ Հուսիսային Ափրի-

կէն հանդարտ լինի և պարտաւերջ ձայն չը հանեն. եթէ Փոքր Ասիոյ բաղդին հորիզոնն ամպամած չը լինի, և եթէ Սպարէի եզերաց սպինքսն մի աշխարհագրական քարտէսի չը մտնենայ մատիսն 'ի ձեռին:

**

Սոյն ատեն, ազգին Սարչական ընթացքն կաղ է, ազգային դատարարակութեան եղանակն անորոշ, մամուլն իւր պաշտօնին չը համապատասխանող, նորա ներքին վերքերն փտութեան կը դիմեն, նորա կղերական դասն Ոսկերերաններու և Ամբրոսիոսներու դեր կատարելէ հեռի է: Հատ լաւ: Եւ երբ բոլոր այս թերութեանց վերայ ուշադրու-

ծարան շիջուցանել՝ այնպէս մի ազգ իւր գոյութիւնն պահելու համար պէտք չէ՛ իւր կենսական պիտոյից հոգն մտնանայ որ և է ժամանակ: Այս լուրջ համոզմամբ է որ մի քանի ամիս յառաջ մեր համախոհներէն ոմանք «Տնտեսական Խնդիրն» յարուցին առանց վարանման, առանց «Լուսատու» ներուն պերճախօս աղաղակին ուշ դնելու: «Փարոսն» առաջիններէն մին եղաւ այս մասին հաստատապէս պնդողն թէ ազգին տնտեսական բարեօրման մասին կան այնպիսի կէտեր որք մեր կարողութեան շրջանին մէջն են: Այս խնդիրն շատ ու շատ յուզեց, մանաւանդ ազգիս Թուրքիարնակ մասն և հօսակ ուրեմն, երբ ամեն գրիչ և կաղամար մէջքն կրողն իւր կարծիքն յայտնեց, երբ ոմանց թոյնն սպառեցաւ, երբ կիրքերն խաղաղեցան և զիրքերն պարզուեցան, տեսին որ



ԱՂԹԱՄԱՐԱՅ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆ, ՀԻՆԵԱԼ 'Ի ԳԱԳԿԱՅ ԱՐՔԱՅԻ
յանն 915—921 և նորաչէն կախողիսարանն:
АРМЯНСКАЯ ЦЕРКОВЬ СВ. КРЕСТА И ПАТРИАРХІЯ НА ОСТРОВѢ АГТАМАРЬ ВЪ ВАНСКОМЪ ОЗЕРѢ.
(Պատկերս նկարեցաւ և փորագրեցաւ. յատուկ մեր հանդիսի համար)

թիւն կը հրաւիրես, ոմանք ազգին զարգացած ճանչցուածներէն կը պատասխանեն քեզ:

— «Իրաւունք ունիս, եղբայր, շատ մեծ իրաւունք ունիս. «դոքա ամենքն անտարակոյս պէտք է կարգի դնել: Բայց նայինք գալ Փետրվարին Պ. Պրայս ի՞նչ պիտի խօսի Անկլիոյ Պարլամենթի մէջ»:

Եւ բազկատարած կ'աղօթեն առ Ամենակարողն Աստուած որ նոյն օրն Պ. Պրայս կոկորդի ցաւ չ'ունենայ:

**

Ինչպէս մարդ ո՛չ սուգի և ո՛չ ուրախութեան ատեն, ոչ լուր և ո՛չ տէրունական օրն, ո՛չ ազատութեան և ո՛չ արգիլեալ ժամանակն կը մոռանայ իւր քաղցն յագեցնել, իւր

առաջարկութիւնն արդէն գործադրութեան շաւղին մէջ է և «Տնտեսական Միութիւն» շայտը ընկերութիւնն, «Ներսէս Պատրիարքի յատուկ նախաձեռնութեամբ վերստին կենդանանալու վերայ է, այն ընկերութիւն՝ որու գաղափարն երեք տարի յառաջ յղացել էին թէպէտ, բայց ո՛չ կարողացել ծնել... հաւանակաբար սպասելով որ Արևմուտքէն կամ շխախէն մի մանկաբարձ հասնի:

Տնտեսական հարցն յարուցանողներն ո՛չ միաստութիւնն և ո՛չ յաւակնութիւնն ունին այս ժամուս յաղթութիւն գոչելով ասելու թէ մի նոր և անլուր խնդիր բերին մէջ տեղ: Նոքա պիտեն թէ ո՞րքան դժուար է արեգական ներքև մի նոր բան ասել: Նոքա պատրաստ են արձաններ ձուլելու այն ամեն հանձարաւոր անձերուն՝ որք ժամանակաւ իւրեանք ևս յուզել են այս խնդիր, այն պայմանաւ սակայն որ պի-

տի հաստատուն թէ 'ի նոցանէ յառաջ ոչ որ աշխարհիս վերայ յայտնած էր այսպիսի մի գաղափար: Յաջողութիւնն՝ ասելու ձևին և եղանակին մէջն է: Այս միջոցին խնդիրն այն է որ 'Ներսէս Պատրիարքն իսկ, որ կարծեմք քաղաքական հարցովն միակ զբաղողն է, նա ևս զգաց ժողովրդեան բուն պահանջքն և հարկ դատեց իւր շուրջն հաւաքել 'ձայնոց Տնտեսական Միութեան' կողմնակիցներու լէզէոնն:

Ի՞նչ պիտի անէ, ի՞նչպէս պիտի գործէ այդ Բնկերութիւնն՝ կանխաւ հնար չէ՛ գիտնալ և ո՛չ քննադատել: Ակզունքն ընդունուած է այժմ, նորա գործադրութիւնն մերձակայ: Աւելի պահանջող պէտք չէ՛ լինին նորա որք մաքառեցան վեց ամիս առանց և յուսալու թէ այսքան կարճ միջոցի մէջ իւրեանց ձայնն լսելի պիտի լինի:

Թող միամիտ լինին 'ձայն' քաղաքագէտներն, այս հարցն յուզուած միջոցի մէջ 'ձայկական խորհրդարոյն' յառաջ ընթանալն պահ մ'անգամ չը կասեցաւ:

Հասարակաց կարծիքն այսպէս յուզուելէն մի արդիւնք ևս յառաջ եկաւ, այն է կրթական ընկերութեանց որոշումն թէ՛ պէտք է 'ձայաստանի աղքատն և գիւղացի մանկտին խիստ մի համեստ շրջանի մէջ կրթութիւն և դպրոցներու մէջ լոկ նախակրթական ուսմունք ատանդուն:

Չըզիտեմք թէ Ս. Պօլսոյ կրթական ազգային Վարչութիւնն ի՞նչ կը խորհի այս մասին, քանզի նա իւր ծայրայեղ համեստութեամբն իւր վերայ խօսիլ չըտայ բնաւին: Մեր ասածն 'Միացեալ Բնկերութեանց' վերայ է, որու

այժմեան Տնօրէն Ժողովոյն ամենահաստատ քայլերէն մին եղաւ նախակրթարանաց վերայ միայն իւր ճիգն թափելու յայտարարութիւնն և առանց վարանման Վանայ Վարժապետանոցի փակիլն, մի հաստատութիւն՝ որոյ անունն դիւթական էր թէպէտ, բայց արգասիքն անստոյգ:

'Տնտեսական բարեօրումն և նախնական ուսումն' ասացինք հինգ ամիս յառաջ: Մեր ծրագրին երկրորդ մասն իրագործեցաւ, առաջին մասին գործադրութիւնն ստանձնելու համար մի լուրջ ընկերութիւն երևան ելաւ կրկին, երեք տարի բողբոջ վիճակի մէջ մնալէ վերջն: Պատճառ չունիմք ուրեմն յուսահատելու որ մի օր երկու զօրեղ Բնկերութիւնք միմեանց աջակցելով պիտի չը գործեն:

Թուրքիոյ 'ձայնոց' մէջ հրապարակախօս լինելն այնքան

հեշտ չէ՛ որքան կը կարծուի: 'Նա մանաւանդ ազգային խնդիրներով զբաղող հրապարակախօսն չէ թէ նիւթական՝ այլ գլխաւորապէս բարոյական զոհողութեանց յանձնառու պէտք է լինի կանխաւ, ամեն յարձակմանց, բամբասանաց պատրաստ պէտք է գտնուի, իւր նպատակի մասին տրուած չար և լիտի մեկնութիւններն պէտք է արհամարհէ, և թէ որ գրագիտութիւնն չէ՛ իւր միակ զբաղմունքն՝ իւր յատուկ շահուց մէջ անգամ վնասուիլն պէտք է աչքն առնու: Այս անհանդուրժելի կացութեան մէջ, հրապարակախօսն մի սխտիկի առարկայ ևեթ ունի, այն է ազգին ուշիմ մասին հաւանութիւնն, որ այս տեղ կարծուածէն աւելի բազմութիւն է: միայն թէ վերոյիշեալ պատճառներով հրապարակի ելնելու, ասպարէզն իջնալու քաջութիւնն չունի: Մեր լաւ գիտէինք 'ի սկզբան թէ ազգին այդ ընտրեալ մասն ի՞նչ կը

մտածէր մեր ընթացքին և պիտոյիցն վերայ, և թէ ի՞նչ մեծ սխալանք էր նորա ձգտումներն հրապարակական թերթերուն ընթերցումէն դատելն, և այդ բաւ էր մեզի:

Այս իրողութիւնն ցոյց կըտայ թէ ո՛չ միայն Տնտեսական հարցի առթիւ, այլ և որ և իցէ ազգային խնդրոյ մէջ այս տեղ փոքր ինչ յակում կայ գրգռուելու, որով յառաջ նետուողն շուրջն բոլորովին ամայի չը մնայ:

Ստիպուած եմք նոյնն չը կարողանալ վկայել մեր Ռուսիաբնակ ազգայնոց մասին, յատկապէս այն դասակարգին համար զոր դուք Ինտելեկտուալ կասէք կարծեմ, և որոց մէջ 'ի հարկէ կը հաշուին և



ՎԱՆԻ ԼԱՅ ԳԵՐԳԵՍՏԱՆ:
 ВАНСКОЕ АРМЯНСКОЕ СЕМЕЙСТВО.
 (Պատկերանկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

ուսանողաց դասն: Բացի մի քանի հեռուոր ձայներէ որք պատահմամբ միայն լսուեցան, ի՞նչ կ'անէր այս միջոցին այդ ինտելիգենցիան երբ ազգային կարևոր խնդիրներ կը յուզուէին, երբ այսչափ ազաղակներ կը բարձրանային այս տեղ: 'Նորմ' ևս 'ձայկական խնդրոյն' վերայ կը մտածէին: Ի՞նչ զարմանալի հանգամանք է այդ որ գոնէ այդ ուսանողներն իւրեանց եռանդուն հասակին մէջ փոխանակ յառաջադոյնն լինելու ամեն օրտաւէտ վիճաբանութեանց մէջ, իւրեանց լուծեամբն փայլած են միշտ: Ինչո՞ւ արդեօք մի քանի տարի յառաջ ամբողջ Ռուսահայերն յասպարէզ նետուեցան մի կրօնական բանակուռի առթիւ և որու հետեանքն այնչափ արդիւնաւոր եղաւ՝ որքան կարող է լինիլ որ և իցէ մի Աստուածաբանական հարց, և ինչո՞ւ արդեօք այժմ՝ որ լուրջ մի պայքար բացուած էր նոցա տուած արձագանքն այնքան տկար եղաւ: Մասեն թէ յոյժ լըջամիտ

և յոյժ աղնիւ է Ռուսահայ Խնտելլիգէնցիան: Համեստութեամբ է ուրեմն իւր մեռելատիպ գիրքն, թէ նորա վերայ կարդացուած գովեստներն են չափազանց: Այժմէ այսօր Ռուսիոյ Հայոց մէջ, ազգային տեսակէտով փայլուն մի գիրք ունեցողներ կան, նոքա ևս, դիւրին է ստուգելն, գրեթէ ամենքն գերմանական դպրոցաց աշակերտածներն են: Մէք չը կարծեմք որ այժմեան Հայ երիտասարդութեան կրթութիւնն այլ կերպ կ'տրուի 'ի Ս. Պետրբուրկ, 'ի Մոսկուա, 'ի Խարբով, 'ի Ղազան, 'ի Ախեյ, յՕտէսսա, որով իրաւունք ունիմք հետևեցնելու՝ թէ այդ Խնտելլիգէնցիան ազգային զգացմանց կողմէ միայն տարտամ է մնացել:

Ուսանել մի ընկերական կացութիւն ունենալու համար՝ այդ ամեն մարդ կարող է անել և այդ ո՛չ զգացմանց աշխուժեան նշան է և ո՛չ զմեծախօսութիւնն կ'արդարացնէ: Չը կայ մի անընդունակ պատանի որ չը յաջողի մի օր ո՛ր և է կերպով, ո՛ր և է մի մասնաճիւղի համար, ո՛ր և է մի համալսարանէ մի Տէքլո՛ ստանալ: Բայց եթէ գործաւորն գործէն պէտք է դատել, մէք, ազգային տեսակէտով, աւելին կ'սպասէինք Ռուսահայ Խնտելլիգէնցիայէն, և գուցէ այն ժամանակ կարող կը լինէինք հասկանալ թէ փոքր ինչ մեծամիտ է:

Փոքրիկ բացառութիւններն ընդհանրութիւնն չը կարեն արդարացնել, և մինչև այս կացութեան փոփոխիլն՝ Տաճկահայն միշտ ցաւօք պիտի նկատէ Ռուսիարենակ Հայ հասարակութեան անտարբերութիւնն գէպի իւր համարիւններն, մինչդեռ իւրեանց դասակեր Պուլկարներն և Սերպիացիք այնքան զօրաւոր կերպով նպաստեցին իւրեանց ազգային վերականգման:

Այժմէ համեմատեմք երկու երկիրներու Հայ երիտասարդութիւնն միմեանց հետ, պէտք էր սակայն որ ներհակ մի եղակացութեան համեմեմք: Թուրքիարենակ երիտասարդն ամբողջ իւր ուսմանց ընթացքի մէջ չունի մի Կրօնագիտ, մի համալսարան, մի մասնագիտական ճեմարան, ուր կարենայ ցոյցաբերել իւր ուղեղն բեղմնաւորել ամեն տեսակ ուսմամբք: Իսկ նախակրթարան կամ թաղային վարժարանաց մէջ, ուսմանց ծրագիրն այն աստիճան պակասաւոր և անյարմար է դարուս պահանջներուն, որ մի յառաջագէմ աշակերտն անգամ այն տեղի Բարձրագոյն մրցանակներն առնելէ վերջն, կամ դարձեալ մի տգէտ դուրս կը գայ, կամ ձանձրացուցիչ մի իմաստակ: Արքա որք դպրոցական ընթացքին աւարտելէ վերջն փափաք ունին ուսանելու, պէտք է յԱրրոպա գնան, եթէ կարող են, մի մասնագիտութիւն ուսանելու՝ իսկ մեծամասնութիւն կը մնայ այստեղ ինքնիրեն զբաղելու Վալասիկ և Սքոլաստիք պարապմանց: Այս պատճառաւ է ահա որ Ս. Պոլսոյ մէջ քիչ շատ համբաւ ստացած անձինք, նոյն իսկ հրապարակախօսներն, լոկ դասական ուսմունք առած լինելով, սոգետ մնացել են բոլորովին դրական գիտութիւններու մէջ, որով շատ անգամ խօսածնին և գրածնին ո՛չ գլուխ ունի և ո՛չ սուտ, այլ մեծահնչուն դասակարգութեանց մի հաւաքածոյ է ձեւին մէջ ձանձրացուցիչ և հիման մասին դատարկ:

Այնն չէ՛ Ռուսիարենակ ազգայնոց համար: Արքա ամեն կողմ և առատօրէն ունին, 'ի շնորհս իւրեանց Վառապարութեան, Կրօնագիտ, համալսարանք և մասնագիտական ճեմարանք, որք կարող են միձիլ այսօր Արրոպիոյ ամենահամբաւաւոր դպրոցաց հետ և ուր Հայ մանուկն և պա-

տանին կընդունուին անխտիր: Չարմանալի չէ՛ ուրեմն եթէ Ռուսիարենակ ազգայնոց մէջ գլխաւորապէս մասնագէտներ կը գտնուին, որոց մի քանին ևս աշխարհածանօթ եղած են: Մի բառով նոցա մէջ դրական և հետևապէս լուրջ մարդիկ աւելի բազմաթիւ են:

Արդ՝ միժէ իրաւունք չունի՞ ազգն այս վերջիններէն աւելի աջակցութիւն սպասել, նոքա որք դրական գիտութեանց հետ առողջ և լայն գաղափարներ կուենան 'ի հարկէ ազգայնութեան, յառաջադիմութեան եղանակներուն վերայ, և միժէ սոցա գործունէութիւնն առաւել օգտաւէտ չը լինի ընդհանրութեան շահերուն քան միւսներուն աւելի եռանդոտ քան խոհուն ձգտումներն:

Այս է նաև գլխաւոր, կարեմք ասել միակ պատճառն, որ այդ կողմի և այս կողմի Հայերն դժուարաւ 'ի միասին կարող են կենակցիլ, վասն զի մի և նոյն գաղափարներն մի և նոյն տեսակէտներն չունին, վասն զի մի և նոյն կերպով չը մտածեն, հետևաբար միմեանց հետ չը կարողացել են համերաշխութիւն գոյացնել և փոխադարձ համակրական զգացումներ տածել:

Աւ սակայն պէտք է որ անհետանայ այս վնասակար կացութիւնն: Հայն ո՛ր երկրի, ո՛ր կառավարութեան հպատակ որ լինի, մի և նոյն շահերն ունի և ազգայնութեանց մասին Ռուսահայն, Թուրքահայն, Պարսկահայն, Ռուսահայն չէ՛ կարող տարբեր կերպով մտածել:

Ազգային երկու գլխաւոր մասանց մէջ փոխադարձ համերաշխութիւն գոյացնելու համար, երկու կողմի մասնագէտներն մի կարևոր գեր կարեն ունենալ, եթէ ուղեն, միմեանց մէջ յարաբերութիւններ գոյացնելով: Ռուսահայ մասնագէտն երբեմն չը գիտէ անգամ Թուրքիոյ Հայ մասնագէտի անունն որ մի և նոյն ճիւղի կ'զբաղի նոյնպէս և փոխադարձաբար: Ասիական աստուծոն չը թողու գայնս ինքնաբերաբար միմեանց ներկայանալ և յարաբերութիւն գոյացնել նախ յօգուտ իւրեանց և ապա ազգին:

Հարկ է նաև որ երկու կողմի լրագիրք կարողանան իւրաքանչիւր երկրի Հայուն գաղափարաց, բարուց և գործոց ճշգրիտ պատկերն պարբերաբար ներկայացնել, և այս՝ մի միայն ընտրեալ թղթակիցներ պահելով կը լինի, որոց գլխաւոր յատկանիշներն պէտք է լինին գիտող աչք, անկախ գիրք և անկեղծ սիրտ ունենալ: Այսպիսի անձինք դժար չէ՛ գտնել և եթէ դեռ երևան չեն ելած պատճառն այն է որ խմբագրապետք անփոյթ գտնուած են մինչև հիմայ զայնս որոնելու: Այս բանին համար դրամ չէ հարկաւոր, այլ լոկ մի հրաւեր:

Պէտք է նաև որ Թատերական ընտիր խումբեր մի երկրէն միւսն գնալով, Հայու ներքին կենաց հանգամանքներէ քաղուած թատերական խաղերով, կենդանի մի գաղափար տան հեռաւոր եղբարց արդէ կենալին, լեզուին, սովորութեանց և մտաւորական յառաջադիմութեան աստիճանին վերայ: Վարձեալ նոյն ուղղութեամբ, այսինքն ժողովրդի կենալն ճշդութեամբ արտայայտող, գրուածներ պէտք է փոխանակուին և տարածուին առատօրէն, և այլն:

Բայց ըստ մեզ սոցանէ կարևորագոյնն և աւելի գործնականն է ինչ որ վերջերս, թէպէտ տարբեր տեսակէտով,

Տփլիսի նազիտական Դոդոլի ականաւոր անդամք արտա-
յայտեցին իբրև մի իղձ: Այն է Աովկասի, այս հայկական
նոր և մեծ կեդրոնի մէջ, մի Համալսարանի հաստատու-
թիւնն: Այդ Համալսարանն եթէ հաստատուի, ինչպէս
որ կը յուսամք, չը կարէ Ռուսիոյ միւս գլխաւոր քաղաքաց
Համալսարաններէն յետնագոյն լինել, և որու Առաւարու-
թիւնն ըստ տեղական հանգամանաց մի այնպիսի կերպարան
պիտի տայ անշուշտ, որ երկրին գլխաւոր տարրերն իւրեանց
ազգայնութեան պատշաճ մի կրթութիւն պիտի ստանան:

Այդ համալսարանն բազմաթիւ Թոքթայ ուսանողներ
պիտի հրաւիրէ իւր ծոցն բնականապէս և Ռուսահայ,
Թոքթայ, Պարսկահայ պատանիք պիտի ապրին և ուսանին
միասին երկար ժամանակներ, ճիշդ այն հասակին մէջ ուր
համակրութիւնք դիւրաւ կը գոյանան և համերաշխութիւնն
ցկեանս տեղական կը լինի, այն պատճառաւ որ միևնոյն
ուղղութեամբ յառաջացել են իւրեանց մտաւոր և բարոյա-
կան զարգացման մէջ:

Տփլիսի Համալսարանի հաստատութիւնն, որ պիտի լինի
Թոքթայոց համար, ինչ որ եղաւ Ահա՛մէ Աստորիոյ
Տաճկա-Ալաններուն, մեզ համար մեծ նշանակութիւն ունի

և Առաւարութիւնն, որ գիտէ թէ ի՞նչ կարևորութիւն
ունի դպրոցն օտարաց վերայ բարոյական ազդեցութիւն ու-
նենալու համար, վաղ ընդ փոյթ պիտի իրակացնէ այդ
իղձն անտարակոյս: Աթէ Պրանսան այսօր, բացի իւրեան
յատուկ բարեմասնութիւններէն, Թուրքիայնակ Հայուն
վերայ մի դիւթիչ ազդեցութիւն ունի, գլխաւորապէս իւր
դպրոցներուն շնորհիւն է, յորոց դուրս եկած մասնագէտ-
ներն մի մի առաքեալներ կը լինին իւրեանց մտաւորական
խանձարուն ջատագովելու համար, մինչև իսկ նորա թերու-
թիւններն անտես առնելով:

Մեր քաջ գիտեմք որ այդ Համալսարանական հարցն
բարձրագոյն շրջաններու մէջ նկատողութեան առնուած է,
և այս յոյսն առաւել ևս մեզ հաճելի է սնուցանել որ
Առաւարութիւնն իւր շահերն չըզատէ Հայոց շահերէն,
ինքն որ բուն հեղինակն է 61-դ յօդուածին և որու փու-
թով իրականացման համար ամենէն աւելի անկեղծօրէն
փափաքողն է, հաւատարիմ մնալով միշտ իւր մարդասիրա-
կան և քրիստոնէավայել նուիրական պաշտօնին արևելքի
վերաբերմամբ:



ՆԱՍԱԿ Ի Կ. ՊՕԼՍՈՅ *)

Կ. Պօլսի, 10 Օգոստոսի, 1881:

ՊՈՒՅԷ վերջին անգամը լինի «Փարոսի» մէջ Ա. Պօլսից
խօսելու. այս անգամ ևս կ'ուզեմ խօսել այն նիւթի վրայ,
որը քիչ հետաքրքրի չ'պիտի լինի ուսաստայերիս համար,
որոնց շահերը օրեց օր աւելի սերտ կերպով պիտի կապվեն
տաճկահայոց շահերի հետ. միացնող օղակը և թարգմանը
երկու կողմի ազգայինների մէջ պիտի լինի նոցա ինտելի-
գէնցիան. ահա՛ նորա վրայ կ'ուզեմ խօսել:

Իւրաքանչիւր հասարակութեան ինտելիգէնցիայի մտա-
ւոր և բարոյական կարողութիւնը կ'չափվի և կ'յայտնվի
այն ժամանակ աւելի, երբ նա մասնակցութիւն կ'ունենայ
և գործօն դեր կ'կատարի իւր ազգային և հասարակային
հաստատութեանց մէջ: Այս կողմի Ա. Պօլսի հայ ինտել-
լիգէնցիան շատ աւելի լայն ասպարէզ ունէ, քան թէ
ուսաստայերինը: Չունենալով բարեկարգված և քաղա-
քակրթված տերութեան բոլոր յառաջադիմական պայման-
ները, Թուրքիան գրեթէ լիովին յանձնած է հայերին իւ-
րեանց ուսումնարանների, եկեղեցիների և ազգային ներքին
գործերի (ըստ մեծի մասին իհարկէ կրօնական) կարգադրու-
թիւնը: Այլապէս և չ'էր էլ կարող լինել, երբ հակա-
ուակ դէպքում Թուրքիան պիտի ունենար իւր սեպհական
քաղաքակրթութեան, օրինաց և յառաջագիմութեան տար-
րերը՝ իւր բարեկարգված և արդար կրօնական և աշխար-
հական ատեանները, իւր լիցէյները, համալսարանները և
մասնագիտական բոլոր բարձր ձեւարանները: Մինչդեռ այս
ամենի կողմից գրեթէ բոլորովին զուրկ է Թուրքիան, այն-
չափ զուրկ, որ հինգ-վեց հարիւր տարուայ մէջ նա չ'կա-
րողացաւ այնչափ գոնէ զարգացնել իւր լեզուն և գրակա-
նութիւնը, որ այսօր կարող լինէր Ա. Պօլսի մէջ ունեցած
իւր միակ Բժշկական լիցէյի մէջ անցնել առարկաները
Թուրքերէն լեզուով և Թուրքաց դասադրբերով: Թուրքա-
կան դասագիրք այս լիցէյի մէջ կարելի է հազու գտնել

միայն ամենաստոր դասատներում, իսկ երկրորդից և եր-
րորդից դէն Պրանսերէն լեզուն է և Պրանսերէն դասադր-
բերը: Ուրեմն այսպիսի պայմանների մէջ ի՞նչպէս պիտի
վարվէր Թուրանական ցեղը իրանից շատ աւելի բարձր և
զարգացած հպատակ ազգերի հետ—իհարկէ այդ հպատակ
ազգերին պիտի յանձնէր նոցա ուսումնարանների և պրո-
գրամի կարգադրութիւնը, որոնց վերաբերմամբ Թուրքիան
չ'ունէր և չ'ունէ ոչինչ ձեռնհասութիւն, ուրեմն և չ'էր
կարող խառնվիլ նոցա տնօրինութեան:

Վստնվելով այսչափ բարեյաջող պայմանների մէջ, գոնէ
այս կողմից, կարողացան արդեօք տաճկահայերը օգուտ
քաղել այդ լայն առանձնաշնորհութիւններից և պատրա-
ստել գոնէ մի երկու սերունդ օրինաւորապէս ուսեալ մար-
դիկ, որոնք կարող լինէին այսօր որ և է մօտաւորութիւն
ունենալ իւրեանց բարձրութեամբ ուսաստայ ինտելիգէն-
ցիայի հետ Հայաստանի բարիքը միասին ներդրուիլու
խորհելու համար: Ո՛չ, տաճկահայերը ո՛չ միայն չ'կարո-
ղացան պարագաներից շահվիլ, այլ ևս չ'կարողացան Ա.
Պօլսի մէջ անգամ մինչև հիմայ Աւրոպական Արժարան-
ների դրութիւնը և ուղղութիւնը մտցնել: Արբ ամբողջ
աշխարհում դաստիարակութեան կլասիքական և թէալական
սիստեմաներ երևեցան, երբ ամեն տեղ մասնագիտական
ձեւարաններ, համալսարաններ, արուեստանոցներ, աշխրտ-
նոցներ (ateliers) ունեցան մեծ և փոքր ազգեր, Ա. Պօլսի
մէջ դեռ մինչև հիմայ ևս չ'մտաւ կանոնաւոր միջնակարգ
ուսումնարանական ուղղութիւն և պրօգրամ: Մինչև հիմայ
ևս հետամուտ եղողը չի կարող գտնել Ա. Պօլսի ամբողջ
էրեւան ստորին և միջնակարգ երկսեռ Արժարանների
մէջ ուրիշ բան, բացի միայն մի կտոր կլասիքական ուղղու-
թիւն, մի կտոր թէալական, մի կտոր միջնակարան սխօլաս-
տիքական, մի կտոր Ա՛նական, և այլն, բայց ամենից

*) Այս նամակս նախընթաց տետրիս մէջ տեղ չը լինելոյն պատճառաւ մնաց ներկայ տետրիս: Հրոհ.

գլխաւորը այն, որ ամենեւին ոչինչ գործադրութիւն չ'ունէ կեանքի, տան և տնարարութեան մէջ:

Սորանից յառաջ է գալիս այն, որ վեց-եօթը տարի Վարժարանի մէջ ժամանակ անցնելուց յետ աղջիկը կամ տղան, գործնական կեանքի համար կ'հանեն միայն գրագիտութիւն, այն էլ խեղաթիւրած և աղաւաղած սխալաստիք և կեղծ կրթական ուղղութեամբ: Իշխնչ ապահովութիւն և նիւթական բարեկեցութեան կարող է տալ այսպիսի խառնուշիտթ, անսխտեմ և վերացական ուսում—իհարկէ ոչինչ: Այսպիսի դրութեան մէջ լինելով Վ. Պօլսի հայոց վարժարանները, սակայն այս տեղի հայ հասարակութիւնը ամենեւին չէ մտածում նոցա դրութիւնը բարւոքելու և բարձրացնելու վրայ. ամենեւին հետամուտ չէ փոխել հին, մաշված և միանգամայն անօգուտ ճանաչուած դրութիւնը եւրոպական ուսումնարանների սխտեմային. ամենեւին ուշադիր չէ արհեստների, արուեստների և գրական գիտութեանց զարգացման, այնչափ անուշադիր, որ մասնաւոր և պատահական անձինք այս մասին խօսած ժամանակ, սքրա վերաբերվում են խորթ և օտարոտի կերպով: Աւրեմն եթէ զատենք Վ. Պօլսի խելամուտ համարված մասից մի քանի տասնեակ բժշկներ և փաստաբաններ, որոնք Պրանսիայ են ուսում առած, և որոնք միայն և եթ զբաղված են իւրեանց սեպհական գործերով և անձնական շահերով, էլ ո՞վ կ'մնայ Վ. Պօլսի հայ յինտելլիգենցիան՝ կազմողը—մի քանի վարժապետներ, մի քանի հարիւր վերացական յլէյս—յլէյս՝ աղաղակողներ և մի այսչափ էլ քանակութիւն կրօնական մարդիկ—ահա՛ որոնք կ'մնան Վ. Պօլսի հայ յնտելլիգենցիա՝ կազմողները, ազգային գործերը զեկավարողները, և Հայաստանի յապագան՝ կարգադրողները... Պարող ենք արդեօք փոխադարձ զգայի համակրութիւն և գաղափարաց ներդաշնակութիւն ունենալ, պատահելով այս ամենի հետ մօտից կամ հեռուից...

Թէ ի՞նչ վնասակար հետեանքներ կարող են ծագել այսպիսի անյաջող հանգամանքներից մեր ընդհանուր ազգային յառաջադիմութեան, մանաւանդ մեր հայրենիքի բարեաց համար—գիտուր չէ՞ գուշակել: Անհամար կարևորագոյն ազգային հարցեր մնում են զանցառութեան և առանց օրինաւոր հրապարակական քննադատութեանց. տասնեակ հազար թարմ ուժեր աղաւաղվում են և թշուառանում այդ վարժարանների մէջ. նոյն քանակութեամբ հայաստանցի բեռնակիրներ անխնամ և անվերջ տանջվում են Վ. Պօլսի աղոտ անկիւններում, մեծամեծ հարցեր երևան են գալիս ազգային ժողովի մէջ, որոնք սակայն չէն յանգում ոչ մի կարգին և փափագելի վախճանին, վիճաբանուելով լոկ ժողովի յոռի շրջանում և չ'ունենալով

արտաքին ազդու հրապարակաստական զարկ. անթիւ նորա նոր ընկերութիւններ գոյութիւն են առնում և անհետանում շնորհիւ ապիկար գործող մարմինների. Հայաստանի մէջ բռնելի ընթացքը և ուղղութիւնը մնում է անորոշ—բոլորն էլ անցնում են կորչում առանց պուբլիցիստական կրիտիկայի, պատճառ՝ այստեղի գործիչների գլխաւոր կոնտինգէնտը վերոյիշեալ վարժարաններից դուրս եկածն է, իսկ դոցանից լրագրական գործով զբաղվողները՝ ամենից առաջ աղքատ և ճնշուած մարդիկ են, որոնք բնականաբար իւրաքանչիւր իւրեանց տառը և տողը նախ նիւթական կշեռքի վրայ պիտի դնեն, յետոյ գրեն ու տպեն: Այսպիսի պայմանների մէջ միթէ հնարին է որ և է յառաջադիմութիւն...

Գալով ուսաստանայ մամուլի ունենալիք ազգեցութեան Վ. Պօլսի գործիչների վերայ, այդ կողմից մեր լրագիրների և թերթերի նշանակութիւնը հաւասարվում է գրեթէ չէ՛ որովհետեւ նախ՝ ուսաստանայ մամուլը շատ և շատ սահմանափակ ընթերցողներ ունէ այս տեղ, երկրորդ՝ չ'ունենալով անկախ, հետեւաբար և ազատ կանխաորոշ տրամադրութիւնից և անձնական հաշիւներից, մշտական թղթակիցներ այստեղ, ուսաստանայ օրագրութիւնը գրեթէ երբէք չի՛ լուսաբանվում տեղիս օրուայ ինդիւրների մէջ արգար և անաչառ կողմերից. ուրեմն ի՞նչպէս կարելի է, որ այսպիսի աղբիւրներից յառաջացած տեղեկութիւնների վերայ, ուսաստանայ լրագրութիւնը կարողանայ բանաւոր և կշռաւոր քննադատութիւններ անել և նպատակայարմար որոշումներ տալ...

Նկատողութեան առնելով այս ամենը, միանգամայն բնական կերպով մարդ գալիս է հետեւեալ եզրակացութեան. ուսաստանայ ինտելլիգենցիայի ուժը և ձեռնհասութիւնը տաճկահայերին արդիւնաւոր անելու համար. նոյնպէս ուսաստանայերի և տաճկահայերի գաղափարաց, ուղղութեան և կրթութեան սխտեմայի մէջ փոխադարձ փոփոխումն, սերտ կապ, համերաշխութիւն և հաւասարակշուութիւն պահպանելու համար, հարկաւոր է՝ կամ՝ ուսաստանայ ինտելլիգենցիան ունենայ միշտ իւր փոքր ներկայացուցիչները Վ. Պօլսի մէջ, կամ իւր սեպհական մամուլը այս տեղ:

Ահա՛ այն հնարը, որով ուսաստանայերի և տաճկահայերի մէջ իրական կապ կարող է գոյանալ, որով ընդհանուր ազգային յառաջադիմութիւնը չի մնայ սահմանափակ և յոռի շրջանի մէջ և Հայաստանի բարւոքման խնդիրը (խօսքը իհարկէ լոկ քաղաքականի վրայ չէ՛) չի մնայ միայն Վ. Պօլսի անկարող և տկար պուբլիցիստների և վարժապետ-գիպլոմատների յոյսով...

Վրե՛տոր Նիկողոսեան:

ՆՈՒԵՐ ԿԱՏԱՐԻՆԵԻ ՍԱՆՈՒԵԼԵԱՆ ԼԱՋԱՐԵԱՆՑ:

ՀԱՆԳՈՒԹՅԱՆ ներկայ ամի Բ. տետրին մէջ ցաւով սրտի յիշեցնիք Վ. Եհզան Տիկին Ատարինէ Մանուէլեան Լազարեանցի մահը և տպագրեցիք նորա գեղեցիկ կենդանապիւրը: Այսօր պարտք ենք համարում ծանուցանել թէ հանգուցեալ Վ. Եհզան Տիկինը կտակաւ թողուց Լազարեան Ղեմարանին՝ 40 հազար ուրբի, Պետրբուրգայ Հայոց եկեղեցեաց՝ 20 հազար ուրբի, և վերջապէս Մոսկովու Հայոց եկեղեցեաց՝ 10 հազար ուրբի, որ ընդ ամենն լինի

70 հազար ուրբի կամ 280 հազար Ֆրանկ: Այսպիսի մեծ նուիրաբերութիւնը, որ պիտի գործածուի յօգուտ Հայ մանկանց, կրկին ապացուցանում է Լազարեան Տոհմի առատաձեռնութիւնը և նոցա խնամքը, որ հանապազ ունեցել են մեր ազգի վերայ:

Հանդիսիս սկզբում կը գտնեն ընթերցողք հանգուցեալ Վ. Եհզան Տիկնոջս հօր՝ Իշխան Մանուկ Պէլի պատկերը:

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

ՄԱՐԻԿԱՅԻՆ ՀԵՏՔԵՐ:

Վերջին ժամանակներուս Օգիոյի հովտի մէջ գտնուեցան ճիշդ հետքեր մարդկային ոտքերի անյայտ ժամանակի, գետնի խորքում գտնուած քարերի վերայ, և այդ հետքերը պատկանում են ամենահետաքրքրական գէոլոգիկան գիւտերին: Վարն, որ ամենապարզ կերպով պահպանեց մարդկային ոտքերի գարշապարը, բերուեցաւ ՚ի Շալէնթուն. կարծում են որ նա այն ժամանակ ջրի տակ եղած պիտի լինէր և ծածկուած կաւուտով, և այդ է պատճառն որ գարշապարը այդպէս ճիշդ տպւորուել է նորա վերայ: Այս սեղ ծագում են զանազան կարծիքներ՝ թէ ի՞նչպէս պահպանուեցան այդ հետքերը այդ քարի վերայ: Թէպէտ և գէոլոգիկական հասակն այդ քարի գեռ ճիշդ որոշուած չէ՛, բայց այսու ամենայնիւ հաստատ յայտնի է, որ նա պատկանում է աւելի հին ժամանակներին, քան մերձեկայ գտնուած ածուխի հանքերը:

ՏԱՄՆԵՒԵՐԿՈՒ ԼՈՒՍԱՆԿԱՐ ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳՐՈՊԵՒ ՄԷՋ:

Մինչև ցայժմ լուսանկար պատկերների պատրաստութեան համար հարկաւոր էր ժամանակ. բաղդաւոր էր համարվում այն մարդը, որ կարողանում էր ստանալ իւր կենդանադիրը երկու օրից յետոյ: Ամերիկացի լուսանկարը

հասան այժմ աւելի արագ եղանակի պատրաստելու լուսանկար պատկերները: Արցա նոր գիւտի էութիւնն այս է. հանուողն նստում է լուսանկար մեքենայի առաջը, որ ունի 12 հատ օբեկտիււ միւսնոյն ֆօտոստիւ: այդ օբեկտիււը տպւորում են զգալի երկաթեայ բարակ թերթի վերայ հանուողի 12 հատ պատկերը: Հանուողն մնում է մեքենայի առաջը միայն երկու երեք վայրկեան. յետոյ երկաթեայ թերթը հանվում է մեքենայից, տարվում է մութ սենեակ և այն սեղ պատկերները հաստատվում են նորա վերայ, և ծածկուելով լաքով, կըտրատվում են մկրատով: Չկնի այսորիկ 12 լուսանկար պատկերները յանձնուում են հանուողին: Այսպէս հինգ րոպէում վերջանում է բոլոր գործողութիւնը: Այդ պատկերները թէպէտ աւելի մեծ չեն քան փոստական մարկաներն, սակայն շատ աժան են և արժեն միայն մէկ ֆրանկ:

ՆՈՐ ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ՏԱՌԻՐ:

Անգղիայում նորերուս փորձ փորձուեցաւ տպարանական տառեր ձուլել շուշայից: Փորձն աջողեցաւ: Շուշայից ձուլուած տառերն դուրս եկան աւելի մաքուր և ամուր. շուշան այս նպատակի համար երևեցաւ աւելի պինդ՝ քան թէ մինչև ցայժմ գործածուած մետաղն: Յոյս կայ, որ շուշան կարելի լինի ձուլել ամենափոքր գաղափարների մէջ և այդ միջոցով պատրաստել ամենաբարակ գծեր և նկարներ:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԿԱՐԴԱ ՈՒ ԿԻՍԱՆԱՍ

ԵՐԵՎԱՆԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ:

— Լսեցիք ինչ ին խօսում մեր Հնազանդական ժողովում:

— Լսեցի, գէորգ Արտեմիչ, խօսում ին իբր թէ Մեսրոպը չէ գտել Արաց տառերը, իբր թէ Նոյի պատմութիւնը շինուի է որովհետեւ, ասում ին, աղանին կարող չէր բերել ձիթենու ձիւղը, ինչու որ ձիթենու ծառեր չ'կան Մասիսի մտակերպում: Իսկ են տեղը ուր բնուում է նա, շատ հեռու է, ու աղանին կարող չէր եղբան հեռաւորութիւն թռչել: Սրա վրայ էլ աւելացնում ին՝ թէ խաղողի ծառ էլ Մասիսի ստորտում կարող չէր լինել էն ժամանակներում, ուրեմն Նոյ նահապետը կարող չէր...

— Հասկանում իմ, ուզում իս ասել, այգի տնկել ու հարբել:

— Հա՛, տնկել ու հարբել...

— Բայց միթէ եղ ձիւղը կարող չէր ուրիշ ծառի ձիւղ լինել և միթէ սրանով Նոյի Տապանի պատմութիւնը կարող է սրտուիլ...

— Ո՛վ գիտէ իժում էր պիտի պատմութիւններ են սրտվում... Իժում սեր սպիտակից, սպիտակը սեխից չեն կարողանում ջուկել, հարցրու պ. Շահապետեանցին ու պ. Երեցեանին, ուր մնաց



ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄ:

հին պատմութիւնների ճշգրտութիւնը դուրս բերել: Իժում, ասում իմ քեզ Գէորգ Արտեմիչ, էնպիսի ժամանակ է վուր եթէ ասեն, օրինակ, թէ ես Համբարձում չիմ, դու Գէորգ չես, պիտի հաւատաս:

— Չէ, Համբարձում ջան, սրա հետ ես համաձայն չիմ: Բայց դու ինձ ասա՛, լսեցիք վուր ասում ին՝ թէ Փարոսը գաղարում է նրա գլխաւոր աշխատակցի հիւանդութեան պատճառով:

— Հա՛, լսեցի: Բայց թէ որքան դրուստ է, չիմ իմանում: Կուզէի միայն վուր եթէ դրուստ է եղ լուրը, հանդէս դուրս գան մեր շատախօսները ու ցոյց տան իրանց զօրութիւնը... Թո՛ղ նրանք, որոնք Փարոսից անբաւական էին ու միշտ աշխատում էին անխորհուրդ ու անիմաստ պատճառներով նրան վիրաւորել, իժում գրիչ ու մատիտ վեր առնեն ու ստեղծեն նրա նման մի պատկերազարդ հանդէս, որ կարծում իմ պատիւ էր միր ազգի համար, մանաւանդ էսպիսի ժամանակում, երբ Եւրոպան էլ սկսել էր աւելի սուր աչքով նայել մեր վրայ...

— Ի՞նչպէս է, Համբարձում ջան, ես էլ կարծում իմ վուր Փարոսի աւերը գարձեալ ուրախ պիտի լինին վուր կարողացան կատարել իրանց պարտքը ազգի առաջ, շատ թէ սակաւ, բա թէ փաստ...

— Ի՞նչ է, Գեորգ Արամիչ, անտարակոյ նրանք մեզուր չին վուր երկար չտեց նրանց հանդիսի հրատարակութիւնը... մեզը էս տեղ նրանցն է, որոնք հասցրին նրանց եղ վճարին: Թէև, իրաւ է, նրանց էլ ածել չէր ուշ գարձնել եղպիսի ցնդաբանութիւններին, բայց ի՞նչ անես վուր մարդու սիրտը երբեմն, ինչպէս ասում ին՝ քարից պինդ է և երբեմն շուշից էլ բարակ...

— Ի՞նչ ասել կուզի՝ ձեր աշխատիր, փուղ մնի, առողջութիւն կորցրու, գանազան գծուարութիւններին յաղթէ, ու շնորհակալութեան տեղ, երեկվայ ջուրերից յանդիմանութիւն լսիր... Նրանցից մինը անամթաբար չէր գրել վուր Փարոսի մէջ՝ իբր թէ՛ տպւում ին միայն օտարազգի ու անխորհուրդ պատկերներ և չէր տեսել Արքայան Ներսէս Պատրիարքի և մեր միւս ազգայինների գեղեցիկ պատկերները... Ես կարծում իմ վուր էն մարդը, որ ուզում է իւր ազգի օգտին ծառայել, եղպիսի լեզու չի գործ ածել, կամաւ չի կուրանալ...

— Հա՛, իմ կարծիքս էլ եղպէս է, գործի գլխուր նպատակին պէտք է նայել ու բերած օգտին և ոչ թէ չնչին ու աննշան պակասութիւններին, որոնք ամեն գործում կարող են լինել... Գեւա մեր լրագրներից ոչ մէկը աներ չը չինեց, որ փոզի խաթրի տանէ ամեն լրբութեան...

— Բայց Հայերը... Հայերը եղպիսիներին պակասակերու ու ազգիս ազնիւ ու անշահասեր գործիչներին պաշտպանելու ու ոգևորելու տեղ, զուարճանում ու ուրախանում ին նրանց յօգուածները կարգալիս...

— Էդ զարմանք չէ՛ սիլ չի իմանում վուր Հայերը սիրում ին ուրիշների վրայ ծիծաղել ու հայհոյութիւն կարգալ... Մշակ սրանով չէր վուր առաջ գնաց... նա չէր վուր թոյլ տուեց իրան տպել իր էջերում մեր իմաստակների գրութիւնները

Փարոսի լեզուի դէմ, իբր թէ նրա սեպհական լեզուն շատ ուղեղ ու շատ կատարեալ է... Հայագէտ մարդիկ, Պօլսեցիք, Իդմիլցիք ու ուրիշներն, եղպէս էլ ծիծաղում ին նրա լեզուի վրայ, թէև բան չեն գրում, որովհետև իժում լեզուի վրայ վիճարանելու ժամանակը չէ...

— Հա՛, եղ եղպէս է՝ ամօթ նրան... իսկ իժում, Գեորգ Արամիչ, մնաս բարով, ես ուզում իմ գնալ Հայաստան... Ղան... Զէյթուն... Ուզում իմ փոքր ինչ ճանապարհորդութիւն անի... ուզում իմ աչքով տեսնել ինչ կայ չկայ եղ անգերում... Եթէ քրդերը ինձ չսպանեն, մէկ օր գուցէ կլի կուտեսնուենք:

— Ղայ, Համբարձում ջան, գնում իս՝ ան, ես էլ քու հետ կու գնայի, եթէ ստանալիքներ չունենայի... Հա՛, լաւ միտս եկաւ, եթէ Գրիգոր Նիկողոսեանին եղ տեղերում պատահես ասս նրան, վուր համը չը տանի, լեզուն փոքր կարճ կապի իսկ եթէ ոչ, կարող է զգուանք պատճառել, ինչպէս պատճառեց Պօլսում... Հա՛, Համբարձում ջան, ցաւում իմ վուր չիմ կարացի գնալ քու հետ բայց ցանկանում իմ քիղ բարի ճանապարհ:

— Շնորհակալութիւն Գեորգ Արամիչ, ես էլ ցանկանում իմ վուր մէկ օր կրկին աջողի մեղ տեսնուել... բայց չիմ կարծում... վախում իմ վուր էս վերջին մի խօսակցութիւնը լինի... աշխարհ է, ո՛ր գիտէ ինչէր կարող են պատահել... հիանդութիւն, մահ... է՛, մնաս բարով...

Ես ևս կասեմ Ձեզ, ո՛ր պատուական ընթերցողք Փարոսի, մնաք բարեալ...

Մ Ո Ւ Ա Կ :

ՃՃՍԱՐԻՑ Է:

Ճշմարիտ է՝ որ Մոսկուայի Համալսարանի Հայ ուսանողներից չորս հոգի իւրեանց դասերով պարապելու տեղ՝ ժամանակ են կարուսանում Մանկուսու երևակայական արձանի վերայ մտածելով ու խորհելով:

Ճշմարիտ է՝ որ Մշակ լրագիրն ստացել է Մոսկուայի Համալսարանի չորս Հայ ուսանողներից 5 կողէկ Մանկուսու երևակայական արձանի համար:

Ճշմարիտ է՝ որ Մշակ լրագիրն ունի մեծ ցանկութիւն, որ մեր բոլոր պարբերական հրատարակութիւնները դադարին ու ինքն միայն մնայ:

Թ Ղ Թ Ա Գ Ի Ր



ՊԱՏԱՍԻԱՆԻԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Պօլսա. առ Գրէֆոր Նիկողոսեան:— Գուր, բարեկամ, Մշակ ներկայ ամի 178 համարում տպուած Ձեր նամակի վերջում ասում էք թէ «Ձեզ ցոյց տուին» Փարոսի Սեպտեմբեր ամսվայ տետրը, և յետոյ, «հետաքրքրվում էք» իմանալ թէ մեր որ տեղից ենք վեր առել այն լուրը թէ «Մշակի խմբագրութիւնը

չէ ընդունում իր Կ. Պօլսի թղթակցից դիտողութիւններ ՚ի նպատակ Փարոսի»:— Պատասխանում ենք. նախ՝ ճիշդ չէ՛ Ձեր ասածը՝ թէ ցոյց տուին Ձեզ Փարոսը, ըստ որում ցոյց տալ Ձեզ այն, ինչ որ Գուր ստանում էք և կարդում էք միշտ՝ անկարելի է, և յետոյ՝ եթէ ճշմարիտ հետաքրքրվում էք իմանալ թէ մենք որ տեղից ենք վեր առել այդ լուրը, կը խնդրենք Ձեզ գիմել մեր բարեկամ և գուցէ Ձեզ ոչ անձանօթ Պ. Գրիգոր Նիկողոսեանին ՚ի Կ. Պօլսա, և նա անտարակոյ կը բացատրէ Ձեզ այդ հանելուկի իմաստը:

Առ Ուսանող. Գուր զարմացած մնացած էք Փարոսի մէջ տպուած Նալբանդեանի մասին տեղեկութիւններից: Կարծում ենք՝ որ Ձեր զարմանքը պիտի կրկնապատկուի երբ որ յաջողի Ձեզ մէկ օր կարդալ նորա լիակատար կենսագրութիւնը, որ Թափառական Հրէայի մէջ յիշուած Ուղեւոր կենսագրութեան հետ, ցաւելով պիտոյ է ասել, մեծ նմանութիւն ունի:

Կ. Պօլսա. առ Գր. Ա. — «Փարոսի» ոճին և շարադրութեան վերաբերեալ ձեր կարծիքներն ձեզ պահեցէք: Մեր հանդէսն զեղեքաբանութեանց և իմաստակութեանց հաւաքածոյ չէ: «Փարոսն» գիտէ և ունի կարողութիւն վարձատրելոյ այն հեղինակին, որ արժանի է բայց պէտք է լաւ գիտենալ թէ ազգին առաջին գրագետներն նոքա չեն, որք զբարձր կը գրեն: Ուրիշ գուր բարեցէք:

«Փարոսն» անբասան ճանցողներն:— Մենք մեր հրատարակութիւնով հարստութիւն չը շահեցանք, քարվաստարայներ չը կանգնեցուցինք, այլ ազգիս օգուտ բերելու նպատակով՝ զհեղինակը աշխատութեան հետ՝ նաև ժամանակ, գրամ և առողջութիւն: Մենք գործեցինք ըստ մեր կարողութեան՝ որպէս և ինչպէս կարողացանք: Ցանկանում ենք ուրիշներին յաջողութիւն աւելի լաւ գործելու նոյն սասարկոյ մէջ: Այս մեր վերջին խօսքն է մեզ մտրակողաց, սիլ ունի ականջ լսելու թող լսէ:

„JOURNAL D'ORIENT“

(Orient-Zeitung)

HEBDOMADAIRE.

ՓԵՐՈՍ ՀԱՅԵՍՏԱՆԻ պատկերազարդ հանդիսի խմբագրութիւնն պարտք է համարում իւրեան ծանուցանել թէ Վիեննայում արդէն երկրորդ տարին է, որ հրատարակվում է գաղղիարէն լեզուաւ շաբաթական „JOURNAL D'ORIENT“ վերնագրով քաղաքական հանդէսը, որի գլխաւոր նպատակն է մշակել արեւելեան խնդիրները, ընդ որս և Հայոցը: Այս պատուական և յոյժ օգտակար մեր ազգի համար հրատարակութեան Մեծապատիւ խմբագիր-հրատարակիչը (M-r F. Salles), իւր մեզ Օգոստոսի 18 էն զրած նամակում, խնդրում է բաժանորդներ զանել նորա հանդիսի համար և ծանօթացնել մեր Հայերը նորա հրատարակութեան նպատակի հետ: Ուրախութեամբ կատարում ենք նորա ցանկութիւնը: „Journal d'Orient“ լրագրի տարեկան գինն է՝ 20 Ֆռանկ (8 մանէթ), կէս տարուանը՝ 10 Ֆռանկ (4 մանէթ), և երեք ամսուան՝ 5 Ֆռանկ (2 մանէթ): Այդ հանդիսին ուղղակի գիմել ցանկացողներն իւրեանց նամակների հասցէն գրելու են այսպէս. „WIENNE (Autriche). M-r F. Salles, Rédacteur en chef du „Journal d'Orient“, 1., Weiburggasse, 9“.—

ԲՆՈՒՄՆՈՒՄ Ի ԳՆՎՂԻՆՈՒՄ ԼԵՅՆՈՒՄ Ի ՀԱՅՆՈՒՄ յօրինեաց Նորայր Ն. Բիւզանդացի: Այս գեղեցիկ և յոյժ օգտակար երկասիրութեան տպագրութիւնը շարունակվում է և հասած է արդէն 74-րդ թերթին: Փարսի խմբագրութիւնն բաց է անում ստորագրութիւն այդ բառգրքի: համար և նորան ստանալ ցանկացողներն կարող են գիմել ուղղակի հրատարակչին: Ամբողջ երկասիրութեան բաժանորդութեան գինն է 1½ օսմանեան լիրա. իսկ թերթ թերթ գնել ցանկացողները վճարում են իւրաքանչիւր թերթի համար 60 փարա արծաթ: Մենք յոյս ունիմք, որ Ռուսաստանի մեր գիտուն Հայկազունք բաժանորդադրելով այդ բառգրքին ոչ սակաւ կօգնէն նորա փութապէս աւարամանը: Նախապէս այդ աշխատութեան հետ ծանօթանալ ցանկացողքն կարող են տեսանել նորան մեր մօտ:

ՎԻՄԵՐՈՒԹԻՆԱՄԻ լոյս տեսաւ և վաճառվում է առայժմ Աղեքսանդրապոլում **ԿԵՐԵՊԵՏ ՅՈՎ ՀԱՆՏԱՆԵՆՆԵՆՅԻ** աշխատասիրած երկրորդ նկարը, որ պարունակում է ԽՆԾԿՕՒՆՅ ժեստատանների հետ ՇԻՐԵԿԻ մի քանի նշանաւոր ՀՆՈՒԹԻՆՆԵՆՅ տեսարանները, որոնք հրատարակուած չեն առկաւին ոչ լուսանկարով և ոչ ևս տպագրութեամբ: Գինն է 1 ռուբլ. Ստանալ ցանկացողները պէտք է գիմեն հեղինակին հետևեալ հասցէով. „Въ г. Александрополь. Каранеты Хачатуряну Александровичу.“

- Հրատարակուեցան **Ե. Ս. ԳՈՒՂԱՄԻՐՆԵՆՅԻ 1882 թուականի ՕՐԵՅՈՅՑՆԵՐԸ**.
Ե. Հարոստականը (Պատի). գինն է 1 ռ.
Բ. Մեծը՝ Ծաղիկ Բնամանեաց յաւելուածով. գինն 40 կոպ.
Գ. Փոքը. գինն է 15 կոպ.
Հրատարակչի հասցէն. Эривань, Абуару Гюламиряну.

ՓԵՐՈՍ ՀԱՅԵՍՏԱՆԻ հանդիսի տպարանական Հայերէն գաւառէրը գնել ցանկացողը կարող է գիմել նոյն հանդիսի խմբագրութեան (ի Մոսկուա):

ՓԵՐՈՍ ՀԱՅԵՍՏԱՆԻ հանդիսի մէջ մինչև ցայժմ տպագրուած Ազգային պատկերների + լեռնէրը գնել ցանկացողը կարող է գիմել նոյն հանդիսի խմբագրութեան (ի Մոսկուա):

„МАЯКЪ АРМЕНИИ“ ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ,

НА АРМЯНСКОМЪ ЯЗЫКЪ,

ИЗДАВАЕМЫЙ ВЪ МОСКВѢ

СОФІЕЮ МСЕРІАНЦЪ.

№ 6.

ГОДЪ ТРЕТІЙ.

1881 ГОДА.

ԲՈՎԱՆԳՆԵՐԻՆԻՍԻՆ

	ԷՉ.
Ա. Յովհաննէս և Այվազովսկի (Շարունակութիւն)	1
Բ. Հերակի մի քանի հնութիւնները (Շարունակութիւն)	4
Գ. Տանկրէդ, (Շարունակութիւն)	9
Դ. Հայաբնակ քաղաքք. Ա. Զմիւռնիա. Բ. Շամախի	12
Ե. Ալֆօնս Գօդէ	15
Ջ. Մկրտիչ Յ. Էմին	17
Է. Օրսկանք վարդանայ	18
Բ. ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ	—
Թ. ՀԱՅԱԶՆԵԱՆ ՏԱՐԵԳԻՐ	16
Ժ. ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ	25
ԺԱ. ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ	—
ԺԲ. ՕՐԱՆՁԱՆ ԳԻՏԵԼԻՔ (Շապիհ 2 և 3 երեսներում) :	

ՅԵՆԿ ԳԼՏԿԵՐԸՅ

- Ա. ԵՄԱՆՈՒԿԱՅԻՑ ՀԱՅԱԶՆՈՒՆՔ: — Ա. Միրզայեան Մանուկ Պէյ (ի յաւելումով): — Բ. Յովհաննէս Այվազովսկի (էջ 1): — Գ. Մկրտիչ Էմին (էջ 17):
- Բ. ՀԱՅՔ: — Ա. Վանի Հայ գերդաստան (էջ 21): —
- Գ. ՏԵՍԱՐԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ: — Ա. Բազմայրի Ուխտը (էջ 5): — Բ. Մարիամեան-Յովհաննէան Օրիորդաց ուսումնարանն ՚ի Տփլիս (էջ 9): — Գ. Աղթամարայ վանքը (էջ 20): —
- Դ. ԵՄԱՆՈՒԿԱՅԻՑ ԵՐԵՒԵԼԻ ՄԱՐԳԻՒԿ: — Ա. Ալֆօնս Գօդէ (էջ 16): —
- Ե. ՏԵՍԱՐԱՆՔ ԱՇԽԱՐՀԻ: — Ա. Զմիւռնիա (էջ 13): —

Փարոս Հայաստանի հանդէսը ստանալ ցանկացողքն իւրեանց նամակաց հասցէն գրելու են այսպէս. Вѣ Москву, Меншикова башня, домъ Милованова, Въ Превосходительству Издательниуъ „Маяка Арменіи“ Софьи Мсеріанцъ. Տաճկաստանի Հայք կարող են բաժանորդ գրուել գիմելով ՚ի Կ. Պոլիս առ Պ. Միրզա Մսերեան, Ասմա ալթը Բաբազ խանի ձօռ, Թիւ 26, կամ ՚ի Զմիւռնիա՝ առ Պ. Գրիգոր Մսերեան, ՚ի Սիլվելի խան, վերի յարկ, Թիւ 17, և կամ ուղղակի գիմել առ հրատարակիչն, իւրեանց նամակաց հասցէն գրելով այսպէս. à Son Excellence M-me Sophie Missérianitz, à Moscou, Menchikowa bachnia, maison Milovanoff.

Խմբագիր Պարտիանարոս Խաչատուր Խաչենեանց: Հրատարակիչ Սոֆիա Մսերեանց:

